10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 224(4842)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

Լիբանանը Հայաստանի կողմին է

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Ամիսներ առաջ Երեւանում պետական այցով գտնվող Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին, դիմելով մայրաքաղաքի Ֆրանսիայի հրապարակում հավաքված բազմահազար երեւանցիների, ասաց. «Ֆրանսիան Հայաստանի կողմին է...», երեկ մեր երկրի կողմին լինելու մասին հայտարարեց նաեւ պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լիբանանի նախագահ Միշել Սլեյմանը. «Լիբանանը Հայաստանի կողմին է»:

Հայաստանի նախագահ Սարգսյանը իր նստավայրում պատասխանելով լիբանանցի լրագրողի հարցին, ասաց. «Մենք փոքր երկրներ ենք ու շատ խնդիրներ կան, որոնց շուրջը կարող ենք համագործակցել: Մասնավորապես միջազգային կազմակերպություններում հայ-լիբանանյան համագործակցության առումով նկատենք, որ երկու երկրներն էլ ունեն անվտանգության խնդիրներ, իսկ արդի աշխարհում շատ ավելի դյուրին է անվտանգության ապահովմանը մասնակից դարձնել նաեւ միջազգային հանրությանը: Բացի դրանից՝ ե՛ւ Լիբանանը, ե՛ւ Հայաստանը ունեն ազատական տնտեսություններ, այս եւ բազմաթիվ այլ ոլորտներում համագործակցության եզրեր մենք տեսնում ենք»: *Տես էջ 3*

Եվրոգոտու երկրները նոր համաձայնագիր կունենան 2012-ի մարտին

Եվրոգոտու երկրները մինչեւ 2012-ի մարտ ամիսը կմշակեն տնտեսական ու ֆինանսական խաղաղությանն առնչվող նոր հիմնարար համաձայնագիր: Այդ մասին երեկ Բրյուսելում՝ ԵՄ գագաթաժողովում հայտարարել է Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին:

Գոտու երկրները որոշել են ստեղծել բյուջետահարկային միություն: Ի-ՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ ԵՄ-ի երկրների ղեկավարները երեկ առավոտյան կարողացել են համաձայնության հասնել 10 ժամ տեւած անընդմեջ բանակցություններից հետո: Դրանով իսկ եվրոգոտու 17 պետությունները Մաաստրիխտի 1992 թ. համաձայնագրերով ստեղծված միությունը համալրել են բյուջետահարկային միությամբ:

Սակայն ԵՄ գագաթաժողովում չի հաջողվել հասնել գլխավոր նպատակներից մեկին՝ տվյալ բարեփոխումը ամրագրել Լիսաբոնի հիմնարար պայմանագրում: Պատճառը Մեծ Բրիտանիայի հատուկ դիրքորոշումն է, որը ներկայումս նոր եւ տհաճ պառակտում է առաջացրել Եվրոմիության ներսում:

Մինչդեռ Եվրոպայի խորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպեյը արդեն հայտարարել է, որ ընդունված փաստաթղթին կարող են միանալ նաեւ եվրոգոտու մեջ չմտնող պետություններ: Բրյուսելում շրջանառվող տեղեկությունների համաձայն, եւս 9 երկիր կարող է դիմել այդ քայլին: Նման պայմաններում Մեծ Բրիտանիան կարող է մենակ մնալ իբրեւ մի երկիր, որը մերժում է բոլոր 27 երկրների համաձայնեցված գործողությունները:

Բացի դրանից, ԵՄ-ի գագաթաժողովում որոշվել է Ֆինանսական կայունության հիմնադրամի չափը սահմանափակել 500 մլրդ եվրոյով: Հիմնադրամի տնօրինությունը կհանձնվի Եվրոպայի Կենտրոնական բանկին:

Մոսկվայում տպագրվում է Զորի Բալայանը՝ 7 հատորով

Մեր նախորդ եւ այսօրվա համարներում (էջ 4) տպագրում ենք ռուս հանրահայտ փիլիսոփա, հրապարակախոս, գրականագետ-գրականադաս, հեռուստատեսության մեկնաբան ու մարդասեր Լեւ Աննինսկու հոդված-առաջաբանը Զորի Բալայանի ստեղծագործություններին, որոնք շուտով լույս կտեսնեն Ռուսաստանի մայրաքաղաքում 7 հատորով: Ռուս առաջադեմ, համամարդկային ցավոտ խնդիրներով տառապող մտավորականների սերնդի վերջին մոհիկաններից Աննինսկու այս առաջաբանը զարդարում է 7 հատորյակի 5-րդ հատորը, որն ամփոփում է Զ. Բալայանի «Ճանապարհ» եւ «Հաղթելու մահ» ստեղծագործությունները:

Քաղաքական ուժերը թայմ-աութ են վերցրել

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի քաղաքական գործընթացները սահուն մտնում են ամանորյա սառեցման փուլ՝ արձանագրելով մի քանի ակնհայտ իրողություններ:

Փաստորեն շահագրգիռ քաղաքական շրջանակները եւ նրանց հարող տեղեկատվական միջոցները ջանքեր թափեցին քաղաքական շարժընթացի ամեն ինչը դիտել ՀՀԿ-ԲՀԿ հակադրության, իսկ առավել ճշգրիտ՝ Սարգսյան-Քոչարյան հակադրության փուլում, բոլոր վերլուծությունները կառուցեցին այդ հակադրության սխեմայով, դրանցով եզրահանգումների եկան, դրանց վրա կառուցեցին իրենց հետագա քայլերը: Սակայն ոչնչի վրա հիմնված տունը փլուզվում է: Այնպես որ՝ բոլորովին զարմանալի չէ, որ Նոր տարուց առաջ, ակտիվ նախընտրական շրջանի սկզբից ընդամենը 3 ամիս առաջ ընդդիմադիր ՀԱԿ-ը կանգնած է դեգրադացիայի առաջ, ԲՀԿ-ն չկերավ կուսը եւ առայժմ գլուխն ազատեց ՀՀԿ-ի հետ մեծ հակադրության պղտոր ջրապտույտից, ընդդիմադիր լայն միավորում էլ այդպես էլ առայժմ չստեղծվեց, եւ քաղաքական դաշտը այս կամ այն կերպ սխալ հաշվարկի վրա վերաձեւողները կոտրած տաշտակի առաջ են: Սակայն ասվածը բոլորովին չի նշանակում, որ ամառվանից սկսած այս վեց ամսում ոչինչ չի փոխվել քաղաքական դաշտում:

Մինչեւ փոխփոխությունների մասին խոսելը, սակայն, առաջարկենք մեր վերլուծաբաններին բոլորովին այլ ելակետից նայել գործընթացներին. եթե նայես, օրինակ, այն ելման կետից, որ Քոչարյան-Սարգսյան հակադրություն մեծ հաշվով չկա, ապա այդ հակադրության վրա վարկած կառուցողների ջանքերը ավազի վրայի տնակ կարող են հիշեցնել (Դավիթ Շահնազարյանի ականջը կանչի): Իսկ մեծ հաշվով որ ասում ենք՝ փոքր հաշվի մաս եւս նկատի առնելով, այդ փոքր մասը, սակայն, «բազարին» կարող է վերաբերել միայն՝ «ով ավելի» պոկելու ենթատեքստով: Ամենաակնհայտ բանը որ տեսանելի է, այն է, որ ե՛ւ ՀՀԿ-ն, ե՛ւ ԲՀԿ-ն համարյա անվթար մտնում են Նոր տարի: Այսինքն երկուսն էլ առանց հստակեցումների եւ առանց մեծ հակադրության են դուրս գալիս փետրվար: ՀՀԿ-ն, իհարկե, կուզենար հստակեցումներ ԲՀԿ-ից, սակայն դա կնշանակեր ձվերը մեկ զամբյուղում դնել, որը երկուսին էլ, եւ կարծում ենք՝ իշխանության առաջին դեմքին էլ պետք չէ, հո այդքան պրիմիտիվ չէ՞ խաղը: Ընդհակառակը, որեւէ իշխանություն կուզենա այնպիսի միավորների վրա հենվել, որոնցից մեկի հաջողությունը եթե նվազ լինի, մյուսին կկարողանա առաջ մղել: Այնպես որ ծիծաղելի էին նրանք, ովքեր գտնում էին, որ ԲՀԿ-ն ու իր առաջնորդը հստակ պետք է այս ասեն, կամ այն ասեն մինչեւ Նոր տարի: Մոռանում էին՝ ի՞նչ բան է քաղաքանությունը: Կամ ո՞վ հորինեց, որ Քոչարյանն ու Սարգսյանը թշնամիներ են, առհասարակ՝ մեկ անգամ գրել ենք. խաղը Հայաստանի երեք նախագահներին է՝ փոխանցումների տեսքով, նրանք խաղը տանում են փոփոխակի հաջողություններով: Միամտություն է կարծելը, թե միասին քաղաքականության եւ երկրի ղեկի մոտ եղած մարդիկ սովորական մրցակցությունից կարող են տեղափոխվել թշնամանքի դաշտ: *Տես էջ 2*

Քրեական գործ փոխգնդապետի նկատմամբ

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ Կոտայքի մարզային քննչական բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետի կողմից պաշտոնական լիազորությունները չարաշահելու դեպքի առթիվ: Ստացված նյութերի համաձայն, փոխգնդապետը, անցնելով իր լիազորությունները, բռնություն է գործադրել իր ենթակայության ներքո աշխատող քննիչի նկատմամբ, ստորացրել նրա պատիվն ու արժանապատվությունը՝ կասկածելով հանցագործություն կատարելու մեջ:

Մ. Մ.

Այսօր Երեւանում՝ ձյուն

ԱԻՆ-ի «Հայիդրոմետ» ծառայության օդերաշիվ հիդրոօդերեւութաբանության կենտրոնի պետ Զարուհի Պետրոսյանից «Ազգը» տեղեկացավ, որ այսօր հանրապետությունում եւ մայրաքաղաքում կտեղա ձյուն: Գիշերը սպասվում է 2-4 աստիճան ցուրտ: Դեկտեմբերի 11-ից եղանակը կպարզվի եւ գիշերը ջերմաստիճանը կտատանվի՝ 5-8 աստիճան ցուրտ: Երեւանում եւ Արարատյան դաշտավայրում առաջիկա օրերին կդիտվի ամպամած եղանակ՝ 3-5 աստիճան տաքություն ցերեկը: Լեռնային շրջաններում սպասվում է մինչեւ 15 աստիճան ցուրտ: Երեւանում գիշերային ջերմաստիճանը կլինի 2-4 աստիճան ցուրտ, ցերեկը՝ 2-4 աստիճան տաքություն, իսկ հաջորդ օրերին՝ մինչեւ 8 աստիճան ցուրտ:

Մ. Մ.

Հանուն «Հրազդան» մարզադաշտի Ռուբեն Հայրապետյանը պատրաստ է էֆկավատորի տակ էլ պառկել

ՀԱՄՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հրազդան» մարզադաշտի տարհանման գոտում առեւտրի կենտրոն կառուցելու խնդրին «**Ազգ**» օրաթերթը բազմիցս անդրադարձել է:

Մարզադաշտի սեփականատերը՝ **Աշոտ Աղաբաբյանը**, մտադիր է մարզադաշտի տարհանման գոտում առեւտրի կենտրոն կառուցել, մինչդեռ առեւտրի գոտին է ադահովում մարդկանց անվտանգ հեռացումը մարզադաշտից: «Հրազդանը» հանրապետության ամենախոշոր մարզադաշտն է՝ կառուցված 75.000 մարդու համար: Նման խոշոր կառույցի համար անհրաժեշտ է 5 հա տարհանման տարածք: 1991-ին «Հրազդան» մարզադաշտը պետության կողմից պահպանվող շինությունների ցանկում էր, 2004-ին նոր ցանկ գրվեց, որտեղ «Հրազդան»-ի անունը չկա: Նույն թվականին մարզադաշտը ուղղակի վաճառքի ձեւով մասնավորեցվեց գույքը վարձակալող ձեռնարկությանը: Թեպետ կառավարությունը համապատասխան որոշմամբ կառույցի արժեքը գնահատեց 350 միլիոն դրամ, սակայն նույն կառավարության որոշմամբ մասնավորեցվել է 88 միլիոն դրամով:

Երեկ մարզադաշտի փրկությանը նվիրված ակցիա է կազմակերպվել, որին մասնակցել է նաեւ ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը: Նա անհանգստություն ունի, որ տարհանման գոտում առեւտրի կենտրոնի կառուցումը կխոչընդոտի միջազգային խաղերի անցկացմանը: «Այս պահին որեւէ միջազգային խաղ չենք կարող անցկացնել: Շատ կարեւոր է մարդկանց տարհանումը, որին կարող է խոչընդոտել առեւտրի կենտրոնը: Բացի դրանից՝ խոտանածկը պետք է փոխվի»: Մարզադաշտի սեփականատեր Աշոտ Աղաբաբյանն ու Ռուբեն Հայրապետյանը Հանրապետական կուսակցությունից են: Ռուբեն Հայրապետյանի խոսքերով՝ կուսակցի դեմ դուրս գալուց չի վախենում, որովհետեւ իր ծնվելուց հետո ծնողներն առաջինն իր վախն են հանել: «Աշոտ Աղաբաբյանին պետք է ճիշտ մատուցել իրավիճակը: Սերունդները կդատապարտեն այս կառույցը կործանողներին: Միայն մարզադաշտ կառուցելու համար 500-600 միլիոն դոլար է անհրաժեշտ, իսկ նման գումարներ մեր պետությունն այսօր չունի: Այժմ կարելի է մարզադաշտը 10-15 միլիոն դոլարով վերանորոգել եւ անցկացնել միջազգային խաղեր: Ինձ ինչ է անհանգստացնում, թե մարզադաշտն ում սեփականությունն է: Այն պետք է ծառայի իր նպատակին»:

Տես էջ 8

ԱԶԳ

Ընթացիկ

Սոցիալական փաթեթ եւ ցածր դեֆիցիտ

Բյուջե-2012-ի առանձնահատկությունները

Այսպիսով, Ազգային ժողովը հաստատեց 2012-ի պետական բյուջեն՝ 911,6 մլրդ դրամ եկամտային մասով, 1 տրիլիոն 44 մլրդ դրամ ծախսային մասով, 132,5 մլրդ դրամ պակասուրդով (դեֆիցիտ): Որո՞նք են այս բյուջեի առանձնահատկությունները եւ ի՞նչ կփոխի այն շարային քաղաքացիների կյանքում:

Վերջին երեք տարիների պետական բյուջեների ֆինանսավորման հիմնական թիրախը պետբյուջեի դեֆիցիտ-համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) հարաբերակցության մակարդակն էր, այսինքն պետական բյուջեի մեծ դեֆիցիտը: Հիշեցնենք, որ, Հայաստանի կառավարությունը, սկսած 2009-ից, մեծ վարկեր վերցրեց միջազգային ֆինանսական կազմակերպություններից եւ այլ դոնոր երկրներից՝ թույլ չտալու համար ճգնաժամի հետեւանքով պետական ծախսերի, այսինքն թոշակների, նպաստների, աշխատավարձերի կրճատում: Դա բնակչության սոցիալական վիճակի վատթարացում թույլ չտալու առումով արդարացված էր, բայց բերեց երկրի արտաքին պարտքի բեռի ավելացման: Եվ ահա 2012-ի բյուջեում արդեն նախատեսված է վերադառնալ ցածր դեֆիցիտին, հասցնելով այն նախաճգնաժամային 3 տոկոսին, ինչը նշանակում է կառավարելի պահել պարտքը եւ չվտանգել տնտեսական աճը:

Հաջորդը հարկեր-ՀՆԱ հարաբերակցության էական բարելավումն է: Հիշեցնենք, որ այս ցուցանիշով Հայաստանն ԱՊՀ երկրներում ամենավատ վիճակում գտնվող երկրների թվում է, ինչը նշանակում է, որ մեր տնտեսության սվերային մասն ավելի մեծ է: 2012-ին ծրագրված է հարկային մուտքերը նախորդ տարվա համեմատ ավելացնել շուրջ 101 մլրդ դրամով, ինչը պետք է բերի հարկեր-ՀՆԱ հարաբերակցության 0,6 տոկոս ավելացման: Այս ցուցանիշի կատարման նպատակով կառավարությունն առաջարկեց հարկային փոփոխությունների փաթեթ, որը սկզբնական տարբերակի համեմատ զգալի փոփոխություններով ընդունվեց խորհրդարանում:

Որքանո՞վ է իրատեսական, որ հավելյալ 101 մլրդ դրամն առանց ցնցումների կհավաքվի: Այս հարցը շատ է քննարկվել, որին մեր թերթում եւս անդրադարձել ենք: Պարզապես նշենք, որ սվերը մեր տնտեսության մեջ պետք է նվազի, իսկ 101 մլրդ դրամի հավելյալ հարկ հավաքելը լրացուցիչ բեռ լինելով, այնքան էլ մեծ բեռ չէ: Համաշխարհային բանկի փորձագիտական հաշվարկներով, Հայաստանում 240 մլրդ դրամ լրացուցիչ հարկեր հավաքելու ռեսուրսներ կան:

Բնակչության անմիջական հետաքրքրություն ներկայացնող հարցերն են բյուջեի ծախսերը եւ գնաճը: 2012-ին 10 տոկոսով ավելանալու են 100 հազար ընտանիքների սոցիալական նպաստները, մոտ 500 հազար թոշակառուների թոշակները: Հարկ է նշել, որ բյուջեի ծախսերից ամենամեծածավալը հենց կենսաթոշակներին ուղղվող գումարներն են՝ մոտ 200 մլրդ դրամ կամ բյուջեի ծախսերի մոտ 20 տոկոսը: Այլ բան է, որ բարձրացումից հետո 28 հազար դրամ միջին կենսաթոշակը դեռեւս բավարար կենսական կարեւոր կարիքների բավարարման համար:

Բյուջե-2012-ի ամենակարեւոր նորությունը այսպես կոչված սոցիալական փաթեթն է: Ըստ վարչապետ Տիգրան Սարգսյանի՝ 120 հազար պետական ծառայողներ օգտվելու են այդ փաթեթից, որով նրանք կարող են հոգալ իրենց կրթական, առողջապահական, Հայաստանում կամ Լեռնային Ղարաբաղում հանգստանալու, հիպոթեկային վարկերի տոկոսները մարելու պահանջները: Այս փաթեթը նշանակում է, որ պետական ծառայողների եկամուտները կավելանան մոտ 10 տոկոսով, թեեւ նրանք այդ գումարները կանխիկ չեն ստանա: Դրանք անկանխիկ կուղղվեն այն նպատակին, որը կորոշի պետական ծառայողը:

Գնաճը վերջին երկու տարվա մեր գլխավոր մտահոգություններից էր, եթե ոչ գլխավորը: Եղան պահեր, երբ այն մոտեցավ երկնիշ ցուցանիշի, լուրջ մակրոտնտեսական վտանգների եւ դրանից բխող սոցիալական հետեւանքների հավանականություն ստեղծելով: Անցնող 2011-ին եւս գնաճի ցուցանիշը բարձր էր Կենտրոնական բանկի նախանշած 3 տոկոս գումարած-հանած 1,5 տոկոս նպատակային միջակայքից: Մինչեւ տարեվերջ այն մոտեցավ այդ միջակայքի վերին սահմանին: 2012-ի համար նույնպես պետական բյուջեում հիմք է ընդունված նույն՝ 3 տոկոս գումարած-հանած 1,5 տոկոս գնաճի նպատակային միջակայքը: Գնաճի ցուցանիշի պահպանումը կարեւոր է նախ եւ առաջ սոցիալական առումով, քանի որ եթե ավելի բարձր լինի, ապա կփոշիացնի կենսաթոշակների եւ նպաստների բարձրացման արդյունավետությունը: Ուստի սոցիալական ծախսերի ավելացման եւ գնաճի զսպման գործընթացների զուգահեռ իրականացումը նույնպես բյուջե 2012-ի կարեւոր խնդիրներից է լինելու:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Քաղաքական ուժերը թայմ-աութ են վերցրել

1-ին էջից

Այնպես զարմանք է հարուցում, որ նույն իշխանությունը ժամանակին կրած ՀԱԿ-ի առաջնորդը կամ նրա փոխնակներն ասում են, որ եթե ԲՀԿ-ն սահմանազատվի Քոչարյանից, այս ու այն կլինի: Լո՞ւրջ ես ասում: Այդ դեպքում պիտի ընդունեք նաեւ այն մտքի գոյությունը, որ եթե ՀԱԿ-ը սահմանազատվի Լեւոն Տեր-Պետրոսյանից, գուցե առավել կանխատեսելի խաղ որդեգրի ՀԱԿ-ը: Ճիշտ, ինչո՞ւ չես ասում՝ եթե ՀԱԿ-ը սահմանազատվի Տեր-Պետրոսյանից, նրան այլ, առավել երիտասարդ կամ առավել նպակաղիր մարդիկ ղեկավարեն, ուր կտանի նրանց խաղը:

Իհարկե, ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի գործելակերպերի առավել հստակեցում, այո, մի օր պահանջվելու է, եւ դա հենց գուցե լինի փետրվարին, համենայն դեպս երկու ուժերն էլ կարողացան այնպես ձգել գործընթացը, որ այդ հստակեցման անհրաժեշտությունը հնարավորինս ձգձգվեց, ընդդիմությունը զրկվեց ինքնակազմակերպվելու, անելիքն իմանալու շանսից, եւ ոչինչ դուրս չեկավ վերահսկողությունից: Ուրիշ բան, որ հասարակության լայն շերտերում աշխատեց ՀՀԿ-ԲՀԿ հակադրության լեգենդը, իսկ այդ լեգենդը հենց իշխանությանն է պետք՝ հետագայում մանեւրելու լուքթ ունենալու համար:

Իսկ նրանց, որոնք մեծ-մեծ բրդում են «ժողովրդավարություն, մարդու իրավունքների պաշտպանություն, ազատ ձեռներեցություն, քաղաքական համակարգի վերացում» բառերը քամուն տալով, հանգիստ կարող ենք բերել ԱԺՄ-ի օրինակը, որի համարյա բոլոր ներկայացուցիչները հիմա տարուկ տեղավորվել են իշխանական տարբեր օղակներում ու մոռացել համակարգային փոփոխությունների մասին իրենց մշտական այն ժամանակվա հանգերգը: Իհարկե, ցանկալի կլիներ թարմացված, նոր պահանջներին համապատասխան, նոր որակների քաղաքական գործիչներով համալրված քաղաքական դաշտ, սակայն ունենք այն, ինչ ունենք, այդպիսի մարդիկ եւ քաղաքական ուժեր աճեցնելու մասին պետք է հեռագայում մտածենք: Իսկ առայժմ ունենք այն, ինչ ունենք, իսկ իրավիճակն էլ այն է, ինչ նկարագրում ենք:

Այս պահին անգամ անհասկանալի է, թե ինչո՞ւ, ի՞նչ խնդիր լուծելու համար պետք է միասնական ցուցակով ընտրություններ գնան ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն, ինչպես որ սպեցիֆիկ մամուլն է գրում, եթե նրանցից յուրաքանչյուրի շատ ձայները հետո իշխանության վերարտադրման խնդիր են լուծելու՝ այս ծայրից կամ այն ծայրից, ի՞նչ կարեւոր է: Ու երբ Գալուստ Սահակյանը երեկ որ ասում էր, թե մի հավատացեք մամուլին, այս պահին ուժի մեջ է փետրվարի 17-ի համաձայնագիրը, ու ընտրություններին ամեն մեկը պետք է գնա առանձին, եւ կոալիցիա հասկացությունն արդեն դատիպ է, երեւի թե այս պահի վիճակը ճիշտ էլ վերարտադրում էր: Իսկ միասնական ցուցակով, թե առանձին՝ դա ընդամենը համագործակցության ձեւերից մեկն է՝ տվյալ իրավիճակով պայմանավորված, սա էլ Սահակյանի ասածն է եւ ուղերձ է արդեն փետրվարմարտ ամիսների ժամանակին:

Առաջիկայում իհարկե, նոր կռվախնձորը ՀՀԿ եւ ԲՀԿ համամասնական ցուցակների կազմությունն է լինելու, բայց դեռեւ՝ ներկուսակցական տուրեւառումների տեսքով: ԲՀԿ-ում պետք է, որ խնդիր դրվի ազատվելու պատեհապաշտ եւ չաշխատող ԲՀԿ-ականներից, ՀՀԿ-ն պետք է իր ադոգեյին հասցնի սերնդափոխության խնդիրը. երկուսն էլ ցավոտ գործընթացներ, որ կարող են երբեմն բումերանգի երեւույթով փորիկ ցնցումների խնդիր առաջացնել երկուսում էլ: Բայց դա անխուսափելի գործընթաց է, ինչպես եւ այն, որ երկու կուսակցություններն էլ իրական մտավորականների ներառման եւ օլիգարխներին հնարավորինս չներառելու խնդիր պետք է լուծեն, քանի որ քաղաքական գործունեությունը, ուզեն թե չուզեն, կամաց-կամաց պետք է սկսի սահմանազատվել բիզնեսից:

Ընդհանուր առմամբ՝ իշխանական թեւում գործընթացներն ավելի հասկանալի են, քան ընդդիմադիր դաշտում: ՀԱԿ-ը, փաստորեն, կամաց-կամաց կորցնում է միակ դիմանաստի ոչ միայն հավակնությունը, այլեւ դիրքը: Արեւմտածին «Ազատ դեմոկրատների» եւ Ռաֆֆի Հովհաննիսյանի «Ժառանգության» հնարավոր կանխատեսվող գործակցությունը կարող է եւ տեղի ունենալ՝ մի շարք ման-մուր կուսակցությունների եւս ներառելով, բայց դա կդառնա ընդդիմադիր հաստվածական կիսաբեւեռներից մեկը միայն: Այդպիսի կիսաբեւեռ կարող է ձեւավորել նաեւ ՀՅԴ-ն, որը բոլոր տվյալներն ունի իշխանության համար ընդունելի ընդդիմություն լինելու: Համագործակցության մի կիսաբեւեռ էլ կարող է լինել մի շարք արտախորհրդարանական կուսակցություններ-ՀՌԱԿ-Արմենական-ՌԱԿ ձեւաչափը, որը դեռեւս ստեղծման մտմտուքում է, ու վաղ է ասել, թե որ դաշտում եւ ում հետ կհամագործակցի: Մինչեւ տարին փոխվելը դեռ մեկ անգամ չէ, որ կանդրադառնանք քաղաքական տարուն եւ սպասվելիքին:

«Հայփոստը» 21 միլիարդ դրա՞մ է վերադարձրել պետբյուջե

Դեկտեմբերի 8-ին տեղի են ունեցել Վայոց Ձորի մարզի 3 համայնքների՝ Եղեգնաձոր քաղաքի փոստային մասնաճյուղի եւ 01 փոստային բաժանմունքի, Մալիշկա գյուղի եւ Վայք քաղաքի 01 փոստային բաժանմունքների վերաբացման պաշտոնական արարողությունները: Այնուհետեւ, «Հայփոստի» գլխավոր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանը, պատասխանելով լրագրողների հարցերին, անդրադարձել է Վանաձորի փոստային բաժանմունքում տեղի ունեցած յուրացումների դեպքին, որի կապակցությամբ ՀՀ դատախազությունը հարուցել է քրեական գործ: «Վանաձորի դեպքը, ինչպես նմանատիպ մյուս դեպքերը, բացահայտել եւ դրանց մասին իրավապահ մարմիններին է տեղեկացրել «Հայփոստը»: Ընդհանուր առմամբ, այսօր «Հայփոստ թրասթ մենեջմենթի» եւ «Հայփոստի» ղեկավարության կողմից շատ խիստ վերահսկողություն է իրականացվում, եւ այդ վերահսկողության շնորհիվ է նաեւ, որ կենսաթոշակների բաշխման գործընթացում հնարավոր եղավ շտկել թերությունները եւ պետբյուջե վերադարձնել շուրջ 21 մլրդ դրամ», նշել է տնօրենի պաշտոնակատարը:

Հետաքրքրական է, որ մինչ այժմ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, ֆինանսների նախարարության կամ դատախազության կողմից նման կոնկրետ եւ խոշոր գումարի պետբյուջե վերադարձման մասին որեւէ տեղեկատվություն չի եղել: Գուցե «Հայփոստն» ու «Հայփոստ թրասթ մենեջմենթը» վերոնշյալ բոլոր կառույցների գործառույթներն իրենց վրա՞ են վերցրել:

Ա. Մ.

Երիտասարդների դերը բուհերում

Բոլոնիայի գործընթացը շուրջ վեց ամիս նախագահում էին Լեհաստանը եւ Հայաստանը՝ որպես համանախագահ երկրներ: Եվրոպայի խորհուրդը, նախագահող երկրների՝ Ուսանողների եվրոպական միության հետ համատեղ դեկտեմբերի 8-9 Աղվերանում կազմակերպել էր միջազգային սեմինար: «Ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը» խորագիրը կրող սեմինարին մասնակցում էին աշխարհի ավելի քան 15 երկրներից ժամանած ուսանող-պատվիրակներ: ՀՀ կրթության փոխնախարար Կարինե Հարությունյանը, ամփոփելով սեմինարի աշխատանքները, նախարարության անունից շնորհակալություն հայտնեց մասնակիցներին՝ աշխույժ քննարկումների, առաջարկությունների համար, որոնք հետագայում կընդգրկվեն ընդհանուր ծրագրերում:

«Ազգի» հարցին, թե հիմնականում ի՞նչ խնդիրների ու պրոբլեմների շուրջն էին ընթանում քննարկումները, տկն Հարությունյանն ասաց. «Հիմնականում քննարկվեցին ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարման, որակի ապահովման գործընթացներին, միջազգային կառույցների հետ կապերի հաստատման, համագործակցության հարցերը: Եղան նաեւ որոշ առաջարկներ՝ օրենսդրական փոփոխություններ անելու, տեղեկատվության տարածման խնդիրների հետ կապված եւ այլն»:

Մասնակիցները գոհ էին, որ իրենց ձայնն այնուհետեւ նշանակություն կունենա կրթության կառավարման բոլոր գործընթացներում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Աղվերան

«Ժառանգություն»-ը ցավակցում է Սյոռա Սաֆարյանին

«Ժառանգություն» կուսակցության վարչությունը ցավով հայտնում է, որ վախճանվել է «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ղեկավար Սյոռա Սաֆարյանի հայրը՝ **Սերյոժա Սաֆարյանը**, ինչի կապակցությամբ խորապես վշտակցում է հանգուցյալի հարազատներին եւ մերձավորներին:

«**Ազգի**» խմբագրակազմը եւս ցավակցում է Սյոռա Սաֆարյանին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Սահմանադրությունը՝ ներկայի ու ապագայի երաշխավոր փաստաթուղթ

ԼՂՀ սահմանադրությունը դարձավ հինգ տարեկան: Հինգ տարին անկախ պետականություն կերտող երկրի համար, ինչպիսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն է, էական արդյունքներ գրանցելու առումով բավարար ժամանակահատված է:

Երիտասարդ պետության հիմնական օրենքի ընդունումն, անշուշտ, պայմանավորված էր ժամանակի մարտահրավերներով: Մինչ այդ, անկախության հռչակումից հետո, Ղարաբաղն անցել էր բազում փորձությունների միջով՝ պատերազմ, անցումային դժվարին շրջան, ավերված տնտեսության վերականգնում եւ այլն: Դա յուրօրինակ քննություն է եղել, որն Արցախի ժողովուրդն անցել է պատվով ու արժանապատվությամբ: Այդ ընթացքում ԼՂՀ խորհրդարանն ընդունել է ավելի քան 500 օրենք, որոնց մի մասը եղել է սահմանադրական բնույթի:

Բնավ պատահական չէր ընտրված դեկտեմբերի 10. նույն այդ օրը, բայց տասնհինգ տարի առաջ, Արցախի ժողովուրդը միահամուռ «այո» էր ասել անկախության հռչակագրին: Եվ ահա 2006-ի դեկտեմբերի 10-ին արցախահայությունը, վերահաստատելով իր վճռականությունը, քվեարկեց սահմանադրությունն ընդունելու օգտին: Կողմ էր քվեարկել 77.279 մարդ կամ քվեարկության մասնակիցների 98.58%-ը, դեմ՝ 554 մարդ: Թվերն անվերապահորեն վկայում են քվեարկության ժամանակ դրսեւորված համաժողովրդական խանդավառության մասին:

Նկատենք, սահմանադրականությունն արցախցիների համար կենսակերպ է եղել նաեւ 5-րդ դարում, երբ Վաչագան Բարեպաշտ թագավորի օրոք, Աղվենի վանքում, ընդունվեց «Կանոնական սահմանադրությունը»: Դա ոչ միայն հայ, այլ նաեւ աշխարհի մյուս ժողովուրդների պատմության մեջ ընդունված առաջին իրավական փաստաթղթերից մեկն էր: Նախ մշակվել են օրենքները (կանոնները), որից հետո նախագիծը դրվել է քննարկման եւ այդուհետեւ՝ ընդունման: Ուշագրավ է, որ դեռեւս 1500 տարի առաջ Արցախում գործում էր պետական նշանակության փաստաթղթերի լայն քննարկման մշակույթը, որը նույնիսկ հիմա էլ որոշ ժողովուրդներ, ինչպիսին հարեւան Ադրբեջանն է, լիարժեք չունեն: Վաչագանն օժտված լինելով արքայինշնորհված շատ լիազորություններով, այդուհանդերձ, սահմանադրությունն ինքնակամ չի ընդունել, այլ դրել է հասարակական-կրոնական տարբեր խավերի ներկայացուցիչների քննարկմանը: Նա կարեւոր է համարել, որ ժողովրդի ներկայացուցիչներն իրենք ընդունեն փաստաթուղթը, որպեսզի հետագայում հավատարիմ մնան դրա հիմնադրույթներին: Ու չի սխալվել:

Մեկուկես հազարամյակ անց, Արցախի օրինաստաշտ ժողովուրդն իր ընտրյալ զավակների միջոցով մշակելով երկրի հիմնական օրենքը, համաժողովրդական քվեարկությամբ ընդունեց այն, որով սահմանադրական մակարդակում ամրագրվեցին պետական ինքնիշխանության հիմնարար սկզբունքները: Եվս մի կարեւոր քայլ կատարվեց ժողովրդավարության հաստատման ճանապարհին:

ԼՂՀ սահմանադրության 12 գլուխները բովանդակում են պետական, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ այլ բնագավառների իրավանորմերը, որոնք ամբողջությամբ բխում են միջազգային իրավունքի տրամաբանությունից:

Արցախցիների այսօրվա ու վաղվա խնդիրն է հավատարիմ մնալ սահմանադրության դրույթներին, ամրել օրենքի գերակայության համընդունումով, քանզի միայն այդ կերպ է հնարավոր հասնել պետության միջազգային ճանաչմանը եւ, անկասկած, ապահովել ժողովրդի բարեկեցիկ ու անվտանգ ապագան:

Երեկ, ԼՂՀ պետական անկախության մասին հանրաքվեի եւ սահմանադրության օրվա առթիվ Արցախի խորհրդարանում տեղի ունեցավ գիտագործնական կոնֆերանս: Զեկուցումներով հանդես եկան ԼՂՀ գերագույն դատարանի նախագահ Արամայիս Ավագյանը, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Վահրամ Աթանեսյանը, ԼՂՀ նախագահի խորհրդական Արարատ Դանիելյանը, բնագավառի առաջատար մասնագետներ:

Ինչպես նշեցին բանախոսները, սահմանադրությունն ընդունված լինելով ժողովրդի կողմից՝ փաստում է պետական իշխանության պատկանելությունը ժողովրդին: Ապահովելով իշխանությունների տարանջատումը՝ ընդգծում Արցախի Հանրապետության ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական եւ սոցիալական բնույթը:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

«Ամերիաբանկի» անակնկալները շարունակվում են

Առավել հարմարավետ պայմաններ եւ նոր ծառայություններ. այսուհետեւ այսպիսի առավելություններով հանդես կգա «Ամերիաբանկի»՝ Կոմիտաս 12 հասցեում գտնվող մասնաճյուղը: Նախկինում այս մասնաճյուղը գտնվել է Կոմիտաս 58-ում, ապա փոքր եւ ոչ հարմարավետ տարածքի պատճառով տեղափոխվել է Կոմիտաս 12, որտեղ երեկ տեղի ունեցավ շենքի պաշտոնական բացումը:

«Ամերիաբանկի» տնօրենության նախագահ եւ գլխավոր տնօրեն **Արսակ Հանեսյանը** նշեց, որ նախկին շենքը նույնիսկ սահմանափակում էր բանկի ծառայությունները. «Օրինակ՝ տարածքը հնարավորություն չէր տալիս մատուցելու վարկավորման ծառայություններ, իսկ սպասարկումն էլ կատարվում էր փոքր քանակությամբ աշխատակիցների միջոցով: Սակայն այս շենքում արդեն կմատուցվեն բոլոր այն ծառայությունները, որոնք ունի կոնկրետ մեր բանկային համակարգը»:

Մասնաշենքում կա վարկային առանձին բաժին, որտեղ աշխատելու են առնվազն 4 վարկային մասնագետներ, տեղակայված են նաեւ դրամարկղային հանգույցը, դեպոզիտային արկղերը եւ այլն:

Գլխավոր տնօրենի տեղեկացմամբ՝ սա «Ամերիաբանկի» 8-րդ մասնաճյուղն է, եւս 2 մասնաճյուղ կբացվեն եկող տարի. մեկը Երեւանում, մյուսը՝ Գյումրիում:

«Ամերիաբանկի» մանրածախ գործառնությունների գծով տնօրեն **Վազգրիկ Սեկոյանն** էլ նշեց. «Մեր ռազմավարությունն ուղղված է զարգացնելու մանրածախ բիզնեսը, հետեւաբար մեր մասնաճյուղերի, այդ թվում եւ այս մասնաճյուղի շեշտադրումը լինելու է մանրածախ բիզեսի զարգացումը»:

Ռ. Պ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

Լիբանանը Հայաստանի կողմին է

1-ին էջից

«Պայքարի եւ զոհողության փառավոր պատմություն»

Նախան Հայաստանի նախագահին այցելելը երեկ առավոտյան նախագահ Սլեյմանը տիկնոջ՝ Վաֆաա Սլեյմանի ուղեկցությամբ, այցելեց Ծիծեռնակաբերդ: Լիբանանի նախագահի այցելությունը Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիր համընկավ ՄԱԿ-ում Ցեղասպանության կոնվենցիայի ընդունման 63-րդ տարելիցի հետ. 1948-ի դեկտեմբերի 9-ին Փարիզում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինի հեղինակած բանաձեւը, որտեղ սահմանվեց «ցեղասպանություն» իրավական եզրույթը՝ որպես մարդկության դեմ գործած հանցագործություն: Ուղիղ 63 տարի այդ օրից անց Ցեղասպանության կոնվենցիայի նախադեպ դարձած Հայոց ցեղասպանության հուշահամալիրում արծաթափայլ եղեւնի տնկեց Մերձավոր Արեւելքում Ցեղասպանությունը ճանաչած առաջին ու դեռեւս միակ երկրի՝ Լիբանանի նախագահ Միշել Սլեյմանը: Իսկ Ցեղասպանության թանգարանի հուշամատյանում նախագահ Սլեյմանը գրեց. «Նա, ով կանգնած է այս կոթողի առջեւ, տեսնում է պայքարի եւ զոհողության փառահեղ պատմություն: Բարեկամ հայ ժողովրդին մաղթում եմ բարգավաճում»:

Իր ճաստավայրում Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Լիբանանի նախագահին՝ ամեն տարի ապրիլի 24-ին Բեյրութում հայ համայնքի կազմակերպած միջոցառումներին ընդառաջելու կապակցությամբ: Ինչպես նաեւ՝ Ցեղասպանությունը խորհրդարանական մակարդակով ընդունելու համար: Լիբանանը 2000-ին ճանաչեց ու դատապարտեց Հայոց ցեղասպանությունը:

«Ինքնորոշման իրավունքի հիման վրա»

Բարեկամ երկրի հերթական դրսեւորում կարելի է համարել նաեւ Լիբանանի դիրքորոշումը ԼՂ հիմնահարցի կարգավորման վերաբերյալ, ինչը, նախագահ Սլեյմանի խոսքերով, «չի փոխվել»:

Նախ իր խոսքում նախագահ Սարգսյանը նշեց. «Ադրբեջանը իսլամական երկրների շրջանակում համառորեն փորձում է հակամարտությունը ներկայացնել կրոնական հակասությունների լույսի ներքո: Կարծում եմ, հայ ժողովրդի պատմության եւ հակամարտության պատճառներին քիչ թե շատ ծանոթ լինելու դեպքում անհնար է հավատալ նման անհեթեթությունների, այդուհանդերձ նման մոտեցումը համարում ենք խիստ վտանգավոր, քանի որ կան այդ մանրամասներին անծանոթ շրջաններ եւ նման հակահայկական քարոզչությունը կարող է անհետեւանք չանցնել: Այս հարցում եւս կարեւոր է բարեկամ երկրների անկողմնակալ եւ անաչառ կեցվածքը...»: Վստահաբար՝ բարեկամ Լիբանանի նախագահը «ծանոթ է հայ ժողովրդի պատմությանն ու հակամարտության պատճառներին», քանի որ նշեց. «Ադրբեջանը իրոք փորձել է հարցը տեղափոխել Իսլամական երկրների կոնֆերանս, սակայն Լիբանանը մշտապես դեմ է եղել, որ այդ կոնֆերանսի շրջանակներում ընդունվի որեւէ որոշում, ինչը կհակասի Լիբանանի կամ Հայաստանի շահերին: Լիբանանի դիրքորոշումը ԼՂ հիմնահարցում չի փոխվել. այս հակամարտությունը պետք է լուծվի միջազգային ինքնորոշման իրավունքի հիման վրա»:

ՖՈՏՈ ԼՈՒՐ

Նախագահ Սլեյմանը հատկապես ընդգծեց տարածաշրջանում խաղաղության պահպանման ու ամրապնդման կարեւորությունը՝ շեշտելով. «Այս տարածաշրջանը պետք է դառնա քաղաքակրթությունները միացնող կամուրջ, ինչպես դա ցանկանում է նախագահ Սարգսյանը, եւ ոչ թե բաժանարար գիծ դրանց մեջ»:

Երեք տասնյակ երկկողմ համաձայնագրերին գումարվեցին եւս 7-ը:

Հանդիպման վերջում Հայաստանի նախագահը իր լիբանանցի գործընկերոջը պարգեւատրեց Պատվո շքանշանով, իր հերթին Միշել Սլեյմանը ՀՀ նախագահին արժանացրեց «Լիբանանի արժանյաց բարձրագույն աստիճանի շքանշանի»: Հանդիպման, ինչպես նաեւ դրան հաջորդած համատեղ ասուլիսի ընթացքում Լիբանանի նախագահը երկկողմ հարաբերությունների զարգացման գործում բարձր գնահատեց լիբանանահայության դերը. «Մենք հպարտ ենք ծագումով հայ լիբանանցիների այն մեծ ավանդի համար, որը ներդրվել է Լիբանանի քաղաքական, տնտեսական, հասարակական եւ մշակութային կյանքում՝ շնորհիվ իրենց ձիրքի, արժեքների»: Հենց այդ «ծագումով հայերից» մեկն էլ՝ Լիբանանի էկոնոմիկայի նախարար Վրեժ Սաբունջյանը իր հայաստանցի գործընկեր Տիգրան Դավթյանի հետ սկսեց հայ-լիբանանյան միջկառավարական 7 փաստաթղթերի ստորագրման արարողությունը: Դրանք վերաբերում են տնտեսական, մարզական, կրթական, մշակութային, շրջակա միջավայրի եւ զբոսաշրջության ոլորտներում համագործակցությանը: Ինչպես նշեց նախագահ Սարգսյանը՝ «Լիբանանը Հայաստանում 5-րդ ներդնողն է, ու այսօր միջպետական երեք տասնյակ համաձայնագրերին կգումարվեն եւս՝ 7-ը»: Սերժ Սարգսյանը ընդգծեց, որ «երկու ժողովուրդների ավանդական բարեկամությունը պարտավորեցնում է ավելի զարգացնել երկկողմ հարաբերություններ», Միշել Սլեյմանը պատասխանեց. «Լիբանանյան կողմի ցանկությունն է՝ երկու երկրների հարաբերությունները բարձրացնել որակապես նոր մակարդակի»:

Հանդիպման վերջում Լիբանանի նախագահը Սերժ Սարգսյանին պատշտոնական այցով հրավիրեց Բեյրութ «ամենամոտ ժամանակներում»:

Երեկ Միշել Սլեյմանին հյուրընկալել են նաեւ ԱԺ նախագահն ու վարչապետը: Լիբանանի նախագահին ընդունել է նաեւ Վեհափառ Հայրապետ Գարեգին Երկրորդը:

Ուրախություն եւ ցավ

Կարդալով Զորի Բալայանին

Սկիզբը՝ նախորդ համարում

Ավելացնենք՝ եւ ոչ միայն Արցախի: Հարկ է այստեղ ահա թե ինչ հիշել: Իր երկերի ժողովածուի երրորդ հատորում Զորի Բալայանը տեղադրել է հետազոտական ակնարկ այն մասին, որ 1915-ը ընդամենը մեկն է հայերի անընդմեջ ցեղասպանության երեսուն տարիներից: Նա բերում է նաեւ տարեթվերը՝ 1893-1923 թվականներ: Մտածելով այդ մասին, պարզապես ապշում ես, թե ինչպես «սրսալի բարեկամ Թուրքիային» (Սոլժենիցին) աջակցեց Սալինը: 1921 թվական: Հայերի ցեղասպանությունը շարունակվում է: Եվ Սալինը, ռուս-թուրքական պայմանագրի սնորագրման նախօրեին հանձնարարում է ժողկոմատում ազգությունների գործերով իր տեղակալ Ա. Սաչկոյին «Ազգությունների կյանքի» գերատեսչական հրատարակությունում հանդես գալ հայերին ուղղված կոչով՝ հանուն հեղափոխության հաղթանակի զոհելու «Թուրքիայում մնացած եւ՛ իր նախկին տարածքները, եւ՛ դրանցում ապրող իր ժողովրդի մի մասին»: Եվ անդամահատեցին: Որպեսզի հածոյանային «իմպերիալիզմի դեմ պայքարող հեղափոխական» Աթաթուրքին: Եվ ուղղակի հատեցին Հայաստանի պատմական տարածքները, որոնք մտնում էին Ռուսական կայսրության կազմի մեջ: Այդ թվում եւ Ղարսը, ինչպես գրում է Բալայանը, ոչ միայն հայկական եկեղեցիով, գերեզմանոցով եւ դպրոցով, այլեւ ռուսական եկեղեցիով, գերեզմանոցով ու դպրոցով:

Մի ողջ դար հետ խորանալով՝ Զորի Բալայանը հիշեցնում է, որ իր նախնիները ռուս մարտիկների հետ մեկտեղ արյուն են թափել ինքնամյա պատերազմում (1804-1813), որպեսզի Ղարաբաղը եւ ողջ Արեւելահայաստանը միացվեն Ռուսաստանին:

Դա այդպես է: Ռուսաստանն այդ հողերը նվաճեց, հետ խլեց պարսիկներից: Թուրքերից: Բայց նրանք էլ չորս դար առաջ դրանք խլել էին հույներից: Այնպես որ, այդ ամենում ուժի գազանային իրավունքից զատ ոչ մի օրինականություն չես գտնի: Իսկ այ, կռվելու «տրամաբանություն» կգտնես: Եվ այդ հավերժական կռիվն իր մեջ առավ ողջ XX դարը:

Հույսը դրեցին ռուսների եւ գերմանացիների միության վրա (ընդդեմ «անգլիացու», որն, ինչպես հայտնի է, միայն «վատություն» անել գիտի), բայց սացվեց բոլորովին հակառակը. Եվրոպան պառակտած անգլո-գերմանական հակամարտության մեջ հենց բրիտանական դաշնակիցը կանգնեց մեր կողմում, իսկ Գերմանիան մեր դեմ ելավ...երկու անգամ, եւ Թուրքիան էլ երկու անգամ նրան միացավ եւ ոչ թե մեզ: Այլ մեր դեմ:

Եվ չօգնեց մեզ Աթաթուրքը: Հուսահատության ու մահացու իրավիճակի տրամաբանությամբ ինքներս նրա կողմը նետվեցինք: Արեւմուտքից հետ ընկրկելով, Սալինը նեցուկ էր փնտրում Արեւելքում: Եվ նրա համար տարբերություն չկար, թե այնտեղ որտեղ են քրիստոնյաները եւ որտեղ՝ մահմեդականները: Մահմեդականները պարզապես ավելի մոտ գտնվեցին Արեւմուտքի (համարյա ամբողջությամբ քրիստոնեական) հետ այդ նույն մահացու հակամարտության մեջ: Անիմաստ է Սալինի՝ նախնական կրթությամբ ուղղափառ եկեղեցու այդ սպասավորի մեջ ի սկզբանե համակրանք որոնել իսլամի հանդեպ, եւ ներողամտությամբ քաջալերում էլ չկար այդտեղ: Կար միայն նույն այն հաշվարկը:

Արդարացվե՞ց դա: Արդյոք Սալինին չդավաճանե՞ց աշխարհաքաղաքական հոսառությունը գազանային վստանգավորության անվիճելի զգացման առկայությամբ: Հենց մահմեդականների վրա խաղագումար դրեց Հիտլերը, եւ Սալինը սիրված եղավ ընթացիկ պատերազմի մեջ վերադասավորվել, ճնշել հնարավոր դիմադրությունը, հյուսիսկովկասյան ցեղերից պոկել մահմեդական ճյուղերն այնպես, որ առ այսօր ախտորված ու վերադարձածների մեջ ատելություն է անթեղված նրանց հանդեպ, ովքեր իրենց դաստարտեցին տարագրության:

Գիտե՞ք, ամեն ինչի համար պետք է պատասխան տալ: Այդ թվում նաեւ հիտլերյան ներխուժման ժամանակ դրսեւորած հուսահատության, երբ Ռուսաստանը փրկություն էր փնտրում կործանումից: Մեր վախի համար վճարեցին հյուսիսկովկասյան մահմեդականները: Եվ մեր հայրերի դառը գործերի համար հիմա մենք ենք վճարում նրանց: Ախտորի համար, որը եւ՛ անօրինական էր, եւ՛ անխիղճ, եւ՛ անուղղելի: Բայց ոչ առանց պատճառի:

Կույր է մահացու կռվի տրամաբանությունը: Այստեղ յուրաքանչյուրն ինքն է հավաքում իր կոստրածի կոստրանքը: Նաեւ գանգերինը: Խոսքս այն հայերի մասին է, որոնց գազանաբար սպանեցին Սումգայիթի կոստրածի ժամանակ, երբ քաղաքաքաղաքացիներ դար այն բանից հետո, երբ գնդակահարեցին Բերիային, եւ քառորդ դար՝ երբ Սալինին դուրս նետեցին դամբարանից: Ահա թե երբ էր, որ Բալայանի մայրն ասաց. «Իրավունք ունեմ մարդասպանների մասին մտածելու ինչ ցանկանում եմ»:

Ունի՞ իրավունք:

Եվ ոչ միայն Արցախն է արնածոր ճակատագրի ու հիշողության մեջ: Սալինյան տարիների տեռորը մոլեգնում է առաջին հերթին համակարգի վերին էշելոններում: Կուսակցությունը ոչնչացնում է համախոհներին: Նայած ոնց ես նայում դրան: Համախոհության մասին գոռում են բոլորը. եւ՛ դահիճները, եւ՛ զոհերը: Մանավանդ այն պահերին, երբ դերերով փոխվում են: Եվ բոլորը մշտապես մտածում են դավադրությունների ու դավաճանությունների մասին: Նույնիսկ ամենավերեւում: Եվ ոչ անտեղի: Արխիվային նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գլխավոր քարտուղարին, նույն իրեն՝ բարձրագույն գլխավոր հրամանատարին փոխելուն որոշ պահերի պատրաստ են եղել պետանվտանգության այն ամենաբարձր պաշտոնյաների մինչեւ 70 տոկոսը, որոնց ջանքերով իրագործվում էր տեռորը: Բնականաբար, հնարավոր չէր այդ գլխակերներից որեւէ մեկին բռնել հանցագործության տեղում. նրանց հոսառությունը լավ էր գործում: Բայց ամենամեծ գլխակերի հոսառությունն էլ թելադրում էր մշտական զգումներ կատարել բոլոր մակարդակներում, ներառյալ բարձրագույնները: Այստեղ հոսառության գծով նա չեմպիոն էր:

Իսկ եթե նրան այնուամենայնիվ վերացնեին թեկուզ 1927, թեկուզ 1937 թվականին, ապա ո՞ւմ կհանդուրժեին նրա տեղում: Տրո՞ցկուն: Տուխաչե՞սկուն: Բայց չէ՞ որ նույն տեռորը կլիներ, թերեւս գնդակահարման ցուցակներում հերթականությունը փոխվեր: Բայց նույնն էր մնալու գերխնդիրը. ամեն ինչ դասավորել անպես, որ այստեղ, «մերոնց» ձեռքով մեռնելուց ավելի վախենային, քան այնտեղ, «քնաս Վիսլայից անդին»՝ օտարների: Որպեսզի պատժիչ գումարակն արդարացի դասավճիռ թվար: Եվ որպեսզի պատժիչ գումարակ ընկնելու պատրաստակամությունը համակեր ժողովրդին՝ վերեւից մինչեւ ներքեւ:

Մինչեւ ներքեւ, քանզի ներքեւում է նրա իսկական հողը: Բնականաբար, երբ Ժողկոմխորհը (կամ ԳՈՒԼԱԳ-ը) մեծացնում են իրենց պահանջմունքները եւ ձերբակալությունների հանձնարարականներն իջնում են մինչեւ մարզեր եւ ավելի ցած, որպեսզի ճամբարային շինարարություններն ապահովեն աշխատուժի հոսքով, ապա համակարգը թվում է ստորության ու կեղծիքի բարձակետ: Բայց երբ ներքեւից են բարձրանում ձերբակալությունների հանդիպակաց պլաններ, «գերակատարելով» վերին հանձնարարականը, սա արդեն բարձրակետն է այն ճշմարտության, որն առավել սարսափելի է, քան որեւէ կեղծիք (կոմունիզմի մասին, կապիտալիստական շրջափակման, լենինյան ժառանգության եւ այլն): Այստեղ է, որ սկսում է գործել ողջ ժողովրդին համակած դատապարտվածության զգացումը՝ մղելով զորակոչվելու եւ պատրաստ լինելու զոհողություններ եւ կործանման, որոնցից կարելի է դուրս պրծնել միայն դիմանալով ԳՈՒԼԱԳ-ի օրենքներին՝ բոլոր մակարդակներում, բարձից մինչեւ Կրեմլ: Հակառակ դեպքում XX դարում չէին պատերազմի: Միայն ողջ ժողովրդով: Առանց բաժանելու զինված ուժերի եւ խաղաղ բնակչության: Խաղաղ բնակչություն այլեւս չկար:

Այդ պատճառով էլ ամենագլխավոր հրեշը, որից վախենում էին բոլորը, ամենից ավելի ինքն էր վախենում: Ընդհուպ մեռնելը վախենում էր. հարվածի էր սպասում պահակազորից, դավադրություն՝ զինակիցներից, ապստամբություն՝ բնակչությունից: Այդ վախով է բացատրվում եւ այն, որ 1947 թվականին նրան ծվատում էին 1927-ի եւ 1937-ի վախերը. իսկ էլ ի՞նչ կարող էր սպասել, եթե ազատվելու էին նստածները...

Նման մտահանգումների «մեծ հաշիվը» համտեսելուց հետո պետք է վճռականություն հավաքել եւ... մարդասպանին կոչել մարդասպան:

Կամ էլ այսպես. մարդասպանին մարդասպան կոչելուց հետո վճռականություն հավաքել՝ ինքդ քեզ տալու այն նույն անիծյալ հարցը. իսկ ինչպե՞ս այդ ամենը հնարավոր եղավ:

Ի՞նչ է «այդ ամենը»:

Համընդհանուր մոլեգնություն, որն ինքնասպան կռվի մեջ հրեց մեծ ժողովուրդներին, երկրագնդի ամենաբարձր մշակույթ ունեցող ազգերին: Չէ՞ որ միայն հիտլերյան համակարգում չէր տիրում համընդհանուր պատրաստակամությունը բռնության հանդեպ. պատերազմը հո համաշխարհային էր: Այն էլ այնպիսին, որ մի ամբողջ դար մնաց այն զգացողությունը, ասես խաղաղություն ընդհանրապես չի լինում, եւ չի լինի...

«Պատերազմ չկա... եւ խաղաղություն էլ չկա... եւ իսկական ճշմարտություն էլ չկա»:

Կհեռանան վետերանները, նրանց թոռներն ու ծոռներն ասիճանաբար կմոռանան կողմերի փաստարկները: Քամին կջնջի պատճառները, կմոխրանան այս կամ այն «ճշմարտության» ապացույցները: Ի՞նչ կմնա: Ի՞նչ մնաց Տրոյական պատերազմից: Գեղեցկուհի Հելինեի հմայքնե՞րը: Իսկ երկու համաշխարհային պատերազմների՞ց: Ի՞նչ է թողնելու մարդկությանը որպես «ճշմարտություն» մեր այս նզովյալ դարը: Տիեզերական անխուսափելի դժբախտության զգացողությո՞ւն: Երբ մոռացվեն կոնկրետ պատճառները, ի՞նչ կմնա: Աղոտ զգացում, ասես պատմությունը գլորվել է մի ինչ-որ անբացատրելի սարսափի մեջ: Մի նոր կույր Հոմերոսի համար:

«Պատմությունը դեռ ամենը չէ», մեջբերում է Բալայանը Ալբեր Քամյուին (որը մեջբերում է հին պատմագիրներին):

Իսկ ի՞նչն է ամենը: Ի՞նչն է պատմությունը դարձնում այնպիսին, ինչպիսին այն կա: Դուք ինչ-որ բան գոնե հիշո՞ւմ եք: Ի՞նչը թշնամանքի մղեց տրոյացիներին եւ ախայացիներին: Սպարտացիներին ու աթենացիներին: Հույներին եւ պարսիկներին: Հողը քի՞չ էր: Ախր ո՞վ կհիշեր, թե ում ինչ հող չի բավականացրել, եթե Հոմերոսը չհավերժացներ արյունալի դատավեճերը՝ իրենց կույր պատկերայնությամբ: Իսկ պատմությունը տեղի է ունենում Երկրի վրա: Չինգիզխանին չի հերիքում արտավայրերի խոտը: Հիտլերին առանց Վոլգայի չի հերիքում կենսական տարածքը: Ի՞նչ չի հերիքում մարդկությանը, երբ նրա բնավորության մեջ հանդես է գալիս նվազ մեղսունակ գազանային էությունը: Այսպիսով, գուցեեւ անասնական բնազդի՞ն վերագրենք գլխավոր տեղը պատճառների շղթայում, որոնք արյան մեջ թաքախեցին անիծյալ դարը: Իսկ ի՞նչ սպասենք ապագայից: Այդ նո՞ւյնը: Իսկ ո՞ւմ գանգատվենք, եթե պետք է գանգատվենք ինքներս մեզնից: Աղոթքներ հղենք երկինք եւ պատասխա՞ն սպասենք հավերժական տիեզերական դժբախտության պատճառների մասին:

Երկինքը չի պատասխանի, որովհետեւ այդ հուսահատությունը ոչ թե հոգուց է, այլ մտից:

«Նա, ով ցանկանում է տեսնել կենդանի Աստծուն, թող որոնի նրան ոչ թե սեփական բանականության դատարկ երկնակամարում, այլ մարդկային սիրո մեջ»:

Սիրո մասին է թախծում «միամիտների սերունդը», որին Զորի Բալայանը դասում է եւ իրեն: Խաբվածների ու դատապարտվածների սերունդ, ինչպիսին այն պատկերանում է նրան: Ես կավելացնեի նաեւ՝ բանականության հանդեպ հավատի վրա խանգարվածների, մարդկության համաշխարհային բարելավմանը հավատացողների սերունդ: Քանզի ես պատիվ ունեմ պատկանելու «վերջին իդեալիստների այդ նույն սերնդին, այդ մեր բանականությունն էր՝ կաղապարված կոմունիզմի հանդեպ հավատով, այդ մեր հոգին պատառոտվեց բանականության քիմեռի կործանումով:

Պատմությունն՝ իր արյամբ հանդերձ, իհարկե, դեռ «ամենը» չէ: Բայցեւ ամենը, որ հայտնաբերվում է պատմության ենթահողում, նույնպես ամենը չէ: Ենթահողն ինքն էլ ամենը չէ: Եվ ընդհանրապես «ամենը» դեռ ամենը չէ: Այսպես է ծածկվում սատանայական անդունդը ինքնահիպնոսի մշուշով, որ բանականությունն է տարածում անընմբռնելի գոյի-անգոյի վրա:

Իսկ հետո մի ինչ-որ մանրուք այդ մշուշից հարվածում է քեզ, կայծակի պես այրում մահապատժի պահին... եւ դահիճը հիշողությանդ մեջ կենդանանում է հենց որպես դահիճ, իսկ զոհը՝ եւս մեկ անգամ մեռնում որպես զոհ, եւ ցավից գալարվում է հոգիդ, որին բանականությունդ մեն-մենակ է թողել մի հարցի հետ.

- Եվ այնուամենայնիվ՝ ինչո՞ւ:

Ինչո՞ւ են բռնում եւ քարշ տալիս ՆԿՎԴ-ականները 33-ամյա կոմունիստական առաջադրյալ Հայկ Բալայանին՝ Լենինային Ղարաբաղի լուսավորության ժողկոմին, եւ «սեւ ագռավով» ուղարկում անէություն: Չէ՞ որ ժողկրթության շարքային չէ եւ ոչ էլ խորհրդային աչքի չզարնող աշխատող (ձերբակալությունից առաջ նրան տեղափոխեցին ղեկավարելու շրջգործկոմը, բայց կարծես հենց նրա համար, որ այդ պաշտոնից ավելի հետաքրքիր էր վերցնելը): Եվ այնուամենայնիվ՝ ինչի՞ համար: Նա ո՛չ ռեժիմի ընդդիմախոսն էր, ո՛չ էլ շարքային քաղքենի: Դա հենց այն երիտասարդ կառուցողն էր նոր հասարակության, որոնցով այն կանգուն է: Իսկ նա՝ ինքը, հոգեւորականի թոռը, որն Աստծո հավատը փոխարինել էր մարքսիստական անաստվածությամբ, նա գոնե հասկանո՞ւմ էր, թե ինչ է կառուցում: Հո կուրորեն չէ՞ր մտել կուսակցության մեջ: Եվ ոչ էլ կուրորեն մեկնեց Մոսկվա՝ սովորելու ընկեր Սալինի անվան Արեւելքի աշխատավորների կոմունիստական համալսարանում, այլ առաջադրվել եւ ընտրվել էր, որովհետեւ անկեղծորեն ընդունել էր խորհրդային իդեալները: Եվ համալսարանն ավարտել էր փայլուն, եւ հետո դարձել էր ժողկոմ (նախարար,- ճշտում է Զորի Բալայանը ներկայիս ոչ լավատեղյակների համար):

Ուրեմն նա գիտակցաբա՞ր էր կառուցում այն պետությունը, որն իրեն կործանեց: Նա հասկանո՞ւմ էր, թե ինչ է կառուցում: Թե՞ այդ հարցը միայն կրկնում է կյանքի աբսուրդացումը բոլոր մակարդակներով, որը մարդկանց իր գիրկն է առնում նզովյալ դարաշրջաններում:

Նրա կինը, 15 տարով իրենից երիտասարդ, գյուղական դպրոցի դեռատի շրջանավարտը շատ ավելի իրավունք ուներ «չհասկանալու»: Ասվածացնում էր ամուսնուն ինտելեկտի համար, եռանդի, համոզվածության: Նրա համար գուցե շատ ավելի դառնագին էր մնալ «ժողովրդի թշնամու» կին, ձեռքին երկու փոքր երեխա՝ կրտսերի հազիվ մեկ տարին բոլորած, ավագի՝ երկուսը... Եվ հենց այդ ավագը ողջ կյանքը դրեց, որպեսզի հասկանա կատարվածը եւ գտնի հոր գերեզմանը:

Գտա՞վ:

Ոչ: Չգտավ: Թեեւ ոտքի տակ առավ Սիբիրն ու Հյուսիսը, հոր հետքը փնտրելով ԳՈՒԼԱԳ-ի սառցապատ ծայրամասերում: Գերեզման չգտավ: Սակայն «ժողովրդի թշնամու» ճակատագրի հետքի վրա ընկավ: Մինչեւ վերջին, մահվան ժամը: Եվ գիտե՞ք, թե ինչպես էր իր օրերն ավարտել նրա հայրը: Ոչ, ոչ թե փլուզված ածխահորում, հանքանյութի տակ ճզմված, ոչ թե անտառահատման բացատում, ցած ընկած ծառաբնի տակ, ոչ պահակաբաշխման ժամանակ, երբ մի քայլ աջ կամ ձախ անելու համար կրակում են առանց նախազգուշացման, եւ ոչ էլ գնդակահարման նկուղում՝ համաձայն փութկոտ «տրոյկայի» դատավճռի:

Հայկ Բալայանը մահացել էր ճամբարային հիվանդանոցում, վիրաբույժի դանակի տակ, որը փորձել էր փրկել նրա կյանքը:

Ի՞նչ է սա: Մթագնած օրինականության եւ հակաօրինական պայծառացման խառնո՞ւրդ: Թե՞ հերթական աբսուրդը. համակարգը փորձում է փրկել նրան, ում հենց ինքն է դատապարտել կործանման: Ընդհանրապես սա կարելի՞ է հանգեցնել մի որեւէ տրամաբանության: Իսկ ի՞նչ անել, եթե ողջ դուրս ելնելուց հետո փորձես հասկանալ, թե ինչու այդ ամենը հնարավոր եղավ:

Ո՞վ ում պետք է դա բացատրի: Մայրը որդո՞ւն: Որդին մո՞րը:

Մայրը տասը տարի ծայրեծայր անցկացնելով ճամբարներում եւ ախտորում, ապրելու է ոչ միայն մինչեւ կուսակցության XX համագումար, որը նրա վրայից հանեց խարանը, ոչ միայն մինչեւ XXII համագումար, որը Սալինին դուրս նետեց դամբարանից, նա ապրելու է մինչեւ այն ժամանակ, երբ հենց խորհրդային իշխանությանն են ոտքերն առաջ հանելու երկրից (իդեպ, հենց նույն Գերագույն խորհրդի ջանքերով): Ի՞նչ պատասխան կտա մայրը որդուն, երբ վերջինս ոչ մի կերպ չի կարողանում վճռել՝ արդյոք մորից պոկի նզովյալ հարցերի պատասխանները, թե փակի շուրթերը, որպեսզի իր հարցերով վերջնականապես հոգեմաշ չանի նրան:

Մայրն է բացում իր շուրթերը եւ արտաբերում երկու բառ. ցավդ տանեմ, ինչպես իրենից առաջ ապրած տառապած հայ կանանց սերունդներ.

- Թող որ ես տանեմ քո ցավը...

***

Ցավի եւ ուրախության մեջ մարդը փնտրում է աչքերին՝ լույս, հոգուն՝ փրկություն:

Քանի դեռ փնտրում է, անհաղթելի է:

ԼԵՎ ԱՆՆԻՆՍԿԻ

Ֆասիեի վերջին ռեւերանսներն Ադրբեջանին՝ «թոշակի» անցնելուց առաջ

Առաքելության ավարտին ֆրանսիացի համանախագահը կորցնում է ոչ միայն հավասարակշռության, այլեւ իրականության զգացումը

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ Մեթյու Բրայզան հաճախ էր հայտնվում իրավիճակներում, երբ ասում էր մի բան ու հետո էլ սկսում հերքել, թե իրեն լավ չեն հասկացել: Դժվար է վստահեցնել, թե Բրայզային ցասահած բոլոր լրագրողները անգլերեն այնքան չեն հասկացել, որ նախկին համանախագահի հայտարարություններն ընկալվեին այնպես, ինչպես արվել էին: Պարզապես Բրայզայի դեմքում ասվում էր մի բան, որն այդուհետեւ նախընտրելի էր հերքել ու համահարթել:

Ֆրանսիացի ներկայիս համանախագահ Բեռնար Ֆասիեն հաճախ նախընտրում է խոսել ռուսերեն, թեեւ այդ դեմքում, ի տարբերություն մայրենի ֆրանսերենով իր խոսքը ներկայացնելու, Ֆասիեին դժվար է հասկանալը: Նման իրավիճակներում էլ ֆրանսիացի համանախագահի խոսքերը որեւէ կերպ ներկայացնելիս էլ միշտ տեղ է մնում հայտարարելու, թե համանախագահին լավ չեն հասկացել: Բայց որ ե՛ւ Ֆասիեն, ե՛ւ հատկապես Բրայզան մեկ-մեկ էլ բացախոսելու կամ դիտավորությամբ ինչ-որ տեղեկություն շրջանառության մեջ դնելու հարց էին լուծում՝ եւս իրողություն է:

Այդուհանդերձ, մեկ-մեկ էլ, անկախ համանախագահից, արվում են հայտարարություններ, որ հստակորեն վկայում են ոչ թե համանախագահող երկրի դիրքորոշման, այլ կոնկրետ համանախագահի, մեղմ ասած, «համակրանքի», եթե չասենք՝ կողմնորոշման մասին: Եվ եթե Բրայզայի ադրբեջանամետությունն ուղղակի ապացույցների կարիք չուներ, թեկուզ իրերը ժամանակից շուտ հավաքելու ու Ադրբեջանում դեսպան դառնալու երազանքի պատճառով, ապա ֆրանսիացի համանախագահի դեմքում հայտարարությունների տարաստեսակությունը քիչ շփոթեցնող է;

Բեռնար Ֆասիեի ադրբեջանամետ դիրքորոշումն, անկախ նրա կողմից հոգնեցնելու աստիճան կրկնված «աղյուսներով տուն կառուցելու» եւ այդպես կարգավորման հասնելու գաղափարից, մեկ ապացույց չէ, որ վաստակել է նրա գործունեության ընթացքում, թեեւ պետք է նաեւ հիշատակել, որ հենց Ֆասիեն բարձրաձայնեց հայ զինվորների հաջ ու խիզախ լինելու մասին որպես վկայություն, որ Ադրբեջանը պատերազմ սանձազերծելու դեմքում հաղթող չի կարող լինել:



Ֆրանսիացի համանախագահը ելույթ է ունեցել Ֆրանսիայի Սենատում՝ այդ երկրում Ադրբեջանի դեսպանատան նախաձեռնությամբ դեկտեմբերի 8-ին տեղի ունեցած «Հակամարտությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ. մոռացված հակամարտություն» եւ «ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահը» թեմաներով կլոր սեղանի ընթացքում, որտեղ, ամենից առաջ, անդրադարձել են ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությանն ու ֆրանսիացի համանախագահի դերակատարությանը:

Հերթական անգամ էլ Ֆասիեն, ըստ «Ազերիպրես» գործակալության եվրոպական բյուրոյի հաղորդման, Փարիզում հայտարարել է, թե ինքը հասկանում է Ադրբեջանի ցավը, քանի որ որպես ֆրանսիացի շատ լավ գիտի, թե ինչ է օկուպացիան: «Փաստաթղթի յուրաքանչյուր տարբերակ, որ հիմա դրված է սեղանին, փաստաթուղթ է, որ մենք մշակել ենք 2005-ից: Իհարկե, ես հրաշալի հասկանում եմ Ադրբեջանի ցավը, այդ երկրի տարածքներն օկուպացված են», քննարկմանն ասել է Բեռնար Ֆասիեն:

Հաստատ է, որ Սենատի քննարկմանը Ֆասիեն ռուսերեն չի խոսել, իսկ քանի որ «ԱՊԱ»-ի եվրոպական բյուրոյի թղթակիցը լավ է տիրապետում ֆրանսերենին, մնում է, որ Ֆասիեն իսկապես նման գնահատական հնչեցրած լինի, եթե, իհարկե, հերթական անգամ ասվածները չեն վերագրվի ադրբեջանական քարոզչության մեխանիզմներին: Պարզվում է, որպես ֆրանսիացի (ստացվում է՝ ոչ որպես եվրոպացի), Ֆասիեն «լավ գիտի», թե «ինչ է օկուպացիան»:

«Բայց Մինսկի խմբին անգործության մեջ մեղադրելն անհիմն է: Մենք չենք կարող ստիպել կողմերին ընդունել վերջնական տարբերակը: Կողմերն իրենք պետք է համաձայնության գան, մենք էլ դրանում նրանց պետք է օգնենք: Այսօր մեր խնդիրը պատերազմի վերսկսումը չթույլատրելն է: Նման ստատուս քվոյի դեմքում պատերազմն ամեն վայրկյան կարող է պայթել: Մեր երկրորդ հաջողությունն էլ այն է, որ կողմերն այսօր նստած են բանակցությունների սեղանի շուրջը: Բացի դրանից, այսօր Հարավային Կովկասը դեմ առ դեմ չի մնացել Ռուսաստանի հետ, այս հակամարտության բանակցություններում խորհրդակցություններ են անցկացնում նաեւ Ֆրանսիան եւ ԱՄՆ-ը», իր ելույթում նշել է ֆրանսիացի համանախագահը:

Խոսելով մադրիդյան սկզբունքներից՝ Ֆասիեն հայտարարել է, որ կազանյան հանդիպումից հետո բանակցությունները փակուղում են, միեւնույն ժամանակ, վիլնյուսյան հայտարարությունից հետո, արդեն հունվարից, հնարավոր է, որ նախագահների մակարդակով բանակցությունները կենդանանան:

Մնում է հուսալ, որ ֆրանսիացի հաջորդ համանախագահ Ժակ Ֆորը իր գործունեությունը չի սկսի ադրբեջանական «սիրալիրության առհավատչյաներ» կուտակելով, այլ Մինսկի խմբի առաքելությանն ու նպատակին կծառայեցնի խորհրդային ժամանակներից Վարշավյան պայմանագրի երկրներին առնչվող հարցերում իր մասնագիտացված լինելն ու Հարավային Կովկասի լավ իմացությունը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռուսաստանը՝ ավիաուղեւորների համար «ամենավտանգավոր» երկիր

Բրիտանական Ascend խորհրդատվական ընկերության անցկացրած հետազոտության արդյունքների համաձայն՝ Ռուսաստանը ավիաուղեւորների համար ամենավտանգավոր երկիրն է: Այդ մասին հաղորդում է «Ուոլ սթրիթ ջոռնալ» թերթը:

Թռիչքների անվտանգության համաշխարհային հաստատության վարչության անդամ Վալերի Շելկովնիկովի խոսքերով, Ascend-ը հաշվի է առնում ուղեւորափոխադրման ընդհանուր ծավալը եւ մարդկային զոհերի հանգեցրած աղետների թիվը: 2011-ին Ռուսաստանի տարածքում կործանվել է 9 մարդատար օդանավ: Դրա հետեւանքով զոհվել է 115 մարդ: Նույն ժամանակամիջոցում ամբողջ աշխարհում օդային աղետների զոհերի թիվը կազմել է մոտ 800, նշում է «Վեդոմոստի» թերթը:

Ռուսաստանում վերջերս տեղի ունեցած գրեթե բոլոր ավիավթարները կապված են եղել մարդկային գործոնի, այլ ոչ թե օդանավերի հետ, թեեւ դրանք տեղի են ունեցել հնացած «Տու», «Ան», «Յակ» օդանավերում, նշում է Շելկովնիկովը:

Փորձագետը օդանավերի թռիչքների անվտանգության մակարդակի անկման պատճառները համարում է օդաչուների պատրաստման ցածր որակը եւ դրա նկատմամբ վերահսկողության բացակայությունը:

Ընդսմին ռուսաստանյան խոշորագույն ավիաընկերությունների՝ «Վերոֆլոտի» եւ «Տրանսաերոյի» անվտանգության մակարդակը փորձագետները բավական բարձր են համարում: Դրանք աշխարհի առավել անվտանգ ավիաընկերությունների թվին են դասվում Virgin Atlantic Airways-ի եւ Emirates Airways-ի հետ մեկտեղ: 2010 թվականի արդյունքների համաձայն, «Վերոֆլոտը» զբաղեցրել է 35-րդ, իսկ «Տրանսաերոն»՝ 10-րդ տեղը: IOSA համակարգով անվտանգության միջազգային մակարդակին համապատասխանում է ռուսաստանյան 13 ավիաընկերություն, մանրամասնել է Շելկովնիկովը:

ՀԱԿԱՌԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պուտինը հեռընտրական անկարգությունների համար մեղադրում է Քլինթոնին

ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնին մեղադրել է Ռուսաստանում հեռընտրական անկարգությունների հրահրման մեջ: Այդ մասին գրում է «Նյու Յորք թայմս» թերթը, նշելով, որ Պուտինը իր ավելի քան 10-ամյա կառավարման ընթացքում առաջին անգամ բախվում է լայնընդգրկուն քաղաքական բողոքի հեռանկարին:

Անձնական մեղադրանքով հանդես գալով՝ Պուտինն ասել է, որ Քլինթոնը խորհրդարանական ընտրություններից հետո «ազդանշան է տվել» ռուսաստանցի «որոշ գործիչների»: Դեկտեմբերի 4-ի խորհրդարանական ընտրությունները որպես զեղծարարություն են բնութագրել ինչպես միջազգային, այնպես էլ ռուսաստանցի մի շարք դիտորդներ, արձանագրում է հոդվածագիր Ջեյմս Հիլը: Նրա խոսքերով, ռուսաստանցիների զայրույթը արտահայտվում է ցույցերով, որոնք անչափ նյարդայնացնում են Կրեմլին:

Պուտինն ասել է, թե արտասահմանից «հարյուրմիլիոնավոր դոլարներ են ուղարկվում ՌԴ քաղաքականության վրա ազդելու նպատակով»: ՌԴ վարչապետն ավելացրել է, որ պետքարտուղարի առաջին արձագանքը ընտրություններին նրա տված այն գնահատականն է, թե դրանք «անազնիվ եւ անարդար» էին, թեեւ դիտորդական փաստերը դեռեւս չէին հրապարակվել:

ՌԴ կառավարության ընդդիմախոսները փորձում են շաբաթ օրը՝ դեկտեմբերի 10-ին, բազմամարդ հանրահավաք կազմակերպել Մոսկվայում: Քաղաքական մեկնաբան, «Միասնական Ռուսաստանի» նախկին պատգամավոր Սերգեյ Մարկովը այս կապակցությամբ նշում է, որ հատկապես Մոսկվայում եւ Սանկտ Պետերբուրգում տարածված է այն համոզմունքը, թե ընտրությունները կեղծված են եղել: Մարկովը կարծում է, որ Կրեմլը դժվար թե բավարարի ցուցարարների գանգատները:

«Ներկայումս Պուտինի հանդեպ վստահությունը բավական մեծ է, թեեւ սկսում է նվազել: Մեկ ամիս առաջ ժողովուրդը Պուտինին պատասխանատու չէր համարի կեղծարարության համար: Այսօր ավելի ու ավելի շատ մարդիկ նրան պատասխանատու են համարում», ասում է Մարկովը:

«Պուտինի այն պնդումը, թե Քլինթոնը կանխակալությամբ է մոտեցել ընտրություններին, թվում է չհիմնավորված: Քլինթոնի առաջին դիտողություններն արվեցին երկուշաբթի օրը՝ այն բանից հետո, երբ ԵԱՀԿ դիտորդները ներկայացրին իրենց քննադատական զեկույցը: Դիտորդները նշեցին կառուցվածքային լուրջ խնդիրներ, որոնցից են ականատեսների ներկայությամբ քվեաթերթիկներ լցնելու աղաղակող դեպքերը», գրում է «Նյու Յորք թայմսը»:

Ըստ Պակիստանի՝ ՆԱՏՕ-ի օդուժի «սխալը» ծրագրված էր

ՆԱՏՕ-ի օդուժի «սխալ» հարվածը, որի հետեւանքով սպանվեցին պակիստանցի 24 զինծառայողներ, նախօրոք ծրագրված է եղել: Այդ մասին երեկ հայտարարել է Պակիստանի զինված ուժերի ռազմական գործողությունների ղեկավար, գեներալ-մայոր Ասֆար Նադիմը, որի խոսքերը մեջբերում է Ռոյթեր գործակալությունը:

Նադիմի ելույթը հրապարակվել է պակիստանյան թերթերում: Նշվում է, որ գեներալը միջադեպն անվանել է «Պակիստանի դեմ նախօրոք նյութված դավադրության» հետեւանք:

Գեներալն ավելացրել է, որ Պակիստանի «կարծեցյալ դաշնակից» ԱՄՆ-ը միանգամայն ընդունակ է նոր հարվածներ հասցնելու: Նադիմը հայտարարել է, որ Պակիստանի ռազմական գերատեսչությունը մտադիր է երկրի սահմանների երկայնքով ստեղծել հակաօդային պաշտպանության համակարգ, որպեսզի թույլ չտա ապագայում նման միջադեպերի կրկնություն:

ՆԱՏՕ-ի ռազմական ուղղաթիռները Աֆղանստանի սահմանի մոտակայքում գտնվող պակիստանյան զինվորական ճամբարին հարվածել էին նոյեմբերի լույս 26-ի գիշերը: Հարձակման հետեւանքով սպանվել էր 24 զինծառայող, 10 զինվորական վիրավորվել էր: ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի եւ Աֆղանստանում անվտանգությանն աջակցող ուժերի ներկայացուցիչները միջադեպը բացատրել էին ամերիկյան օդուժի «սխալով»: Պաշտոնական Վաշինգտոնը ներողություն էր խնդրել Պակիստանից, նախագահ Բարաք Օբաման խոստացել էր անցկացնել միջադեպի բոլոր հանգամանքների մանրակրկիտ հետաքննություն:

Օդուժի հարվածից հետո ԱՄՆ-Պակիստան հարաբերությունները կտրուկ վատթարացել էին: Նոյեմբերի 26-ին Պակիստանը փակել էր Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ուժերի մատակարարման ճանապարհները: Բացի դրանից, դաշինքը ստիպված էր եղել թողնել Բելուջիստանում գտնվող ավիաբազան: Այս կապակցությամբ ամերիկացի քաղաքական գործիչները, մասնավորապես սենատոր Ջոն Մակֆեյնը, կոչ են անում հիմնովին վերանայել ԱՄՆ-Պակիստան հարաբերությունները:

Ի ՀՈՒՇ

Ռուբեն Սերոբի Ղազարյան

Մարդիկ կան, առավելաբար գիտական լուրջ աշխատանքով կլանված, ովքեր աննկատ են մնում լայն հասարակության համար: Լեզվաբան, բառարանագիր Ռուբեն Ղազարյանի պարագայում ավելի ցավալի դիտարկում՝ նույնիսկ նրա անմիջական գիտական շրջանակի մարդիկ՝ լեզվաբանները հատկապես, չգտան, ավելի շուտ՝ չփորձեցին գտնել պատշաճ խոսքեր նրա մահվան կապակցությամբ, որը պատահեց շուրջ մեկ ամիս առաջ, վաղաժամորեն, դաժանորեն ընդհատելով նրա մեծ գործը: Շրջապատի մարդ չէր նա, բառի նեղ իմաստով, ո՛չ ուտող-խմող, ո՛չ էլ «գործ դասավորող»: Լրջագույն գիտնական էր, որ իր կյանքի իմաստն ու իմաստավորումը գտնում էր գիտական տքնանքի մեջ: Նրա մեծարժեք բառարաններն ու ձեռնարկները մնայուն վկայությունն այդ տքնանքի, մնայուն փառքը նրա:

ԽՄԲ.

Անվանի լեզվաբան, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Ղազարյանը որդին էր ԵՊՀ երախտավոր դասախոսներից նշանավոր հայագետ Սերոբ Ղազարյանի: Այս այն դեպքն է, երբ դժվար է գիտական վաստակի առումով նախապատվությունը տալ նրանցից մեկին՝ հորը, կամ՝ որդուն: Նրանք իրենց մնայուն եւ արժանի տեղն ունեն հայ լեզվաբանության ասպարեզում:

Ռուբեն Ղազարյանը պետական համալսարանում շարունակել է այն ավանդույթները, որ թողել են մեր հայտնի հայագետները եւ հատկապես Հրաչյա Աճառյանը՝ ստեղծելով դասագրային եւ բառարանագրական մեծարժեք գործեր: Նրա «Գրաբարի ձեռնարկը» (Հ. Ավետիսյանի հետ) ունեցել է յոթ հրատարակություն եւ մոտ քառասուն տարի համալսարանի ուսանողների միակ դասագիրքն է: Երկու հրատարակություն է ունեցել «Հայոց լեզվի պատմության գործնական դասընթացը» (Եր., 1989, 2002):

Հռչակավոր «Նոր Հայկազեան բառարանի» հրատարակությունից 170 տարի անց Ռուբեն Ղազարյանն առաջինն էր, ով համարձակվեց ստեղծել գրաբարի նոր բառարան՝ երկու հատորով, ուր կան շատ լրացումներ: Հայագիտության մեջ առաջին անգամ նա կազմեց «Գրաբարի հոմանիշների բառարան», որը լույս տեսավ ինչպես Երեւանում, այնպես էլ Լիբանանում (Անթիլիասում):

Ռուբեն Ղազարյանը հեղինակ է «Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարանի», «Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարանի» վեց պրակների (կաթնասուններ, թռչուններ, սողուններ ու երկկենցաղներ, ձկներ, միջատներ, բազմոտանիներ...), «Թուրքերեն-հայերեն բառարանի»:

«Միջին հայերենի բառարանը» (Հ. Ավետիսյանի հետ) բառարանագրական եւ հայագիտական բացառիկ արժեք է:

ԵՊՀ հրատարակչությունը շնորհակալ եւ երախտապարտ է Ռ. Ղազարյանին հայ լեզվաբանության համար հսկայական նշանակություն ունեցող մի շարք գրքեր խմբագրելու եւ հրատարակության պատրաստելու համար: Տասնյակ տարիներ առաջ թարգմանվել էին գերմանացի հայագետ Հայնրիխ Հյուբշմանի «Հայագիտական ուսումնասիրությունները» եւ Յոզեֆ Կարուսի «Կիլիկյան հայերենի պատմական քերականությունը» եւ սպասում էին մասնագետ խմբագրի: Ռուբեն Ղազարյանն է խմբագրել նաեւ Հր. Աճառյանի «Քննություն Կիլիկիայի բարբառի», Գր. Ղափանցյանի, Էդ. Աղայանի գրքերը եւ այլն:

Մահվանից մի շաբաթ առաջ Ռ. Ղազարյանն ավարտեց մի նոր արժեքավոր աշխատություն՝ «Գրաբարի դարձվածաբանական բառարանը», որը մոտ ժամանակներս լույս կտեսնի:

Ռ. Ղազարյանի մահվան լուրը շատ վշտացրեց նաեւ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի տնօրեն դոկտոր Զավեն Եկավյանին: Նա շատ բարձր է գնահատում Ղազարյան-հայագետ մտավորականին եւ վերջին տասը տարիներին հովանավորում էր նրա գրքերի հրատարակությունները:

Հայագիտությունը ծանր կորուստ կրեց: Ռուբեն Ղազարյանն այլ ծրագրեր էլ ուներ, որոնք ցավոք ուրտի միայն ինքը կարող էր իրականացնել: Վստահ ենք, որ այդ աշխատություններն էլ գիտական խոշոր արժեքներ կլինեին:

ՊԵՐՃ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԵՊՀ հրատարակչության տնօրեն

Չխամրող անուն. Անահիտ Ցիցիկյան-85

Հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ ջութակահարուհի Անահիտ Ցիցիկյանն առանձնահատուկ տեղ ունի ոչ միայն փայլուն կատարողական արվեստով. նա հայ երաժշտական միտքը հարստացնողներից ու զարգացնողներից մեկն է եղել՝ նորահայտնություններով: Բարձր կուլտուրայի տեր մտավորական, ազնվակիրթ, զարգացած անհատականություն, ինչը եւ դրսեւորվեց մասնագիտական տարբեր ուղղություններում: Դրան, անշուշտ, նպաստել են նախ եւ առաջ ընտանիքը՝ ազնվական ծագումով, միջավայրը՝ պետերբուրգյան, որտեղ ծնվել եւ նախնական ուսումն է առել, կրթությունը՝ նախ Երեւանի պետական կոնսերվատորիայում, ապա Մոսկվայի կոնսերվատորիայի ասպիրանտուրայում:

1961-ից նա Հայֆիլհարմոնիայի մենակատարն էր: Տասնամյակներ շարունակ Անահիտ Ցիցիկյանի երաժշտական կատարումները հնչել են հանրապետական, միութենական եւ արտերկրի տարբեր բեմահարթակներում, աշխարհի նշանավոր դահլիճներում, շուրջ 100 քաղաքներում Անահիտ Ցիցիկյանը հյուրախաղերով շրջագայել եւ իր երկացանկում անպայմանորեն ունեցել է հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Համագործակցությունը հայ եւ օտար հռչակավոր երաժիշտների հետ (Օհան Դուրյան, Դավիթ Օյստրախ, Ավետ Գաբրիելյան, Դավիթ Խանջյան) հարստացրել է ջութակահարուհու ստեղծագործական կենսագրությունը, նրա կյանքի էջերը: Սակայն երաժշտական գործունեությունը չի սահմանափակվել կատարողական արվեստի շրջանակներում, նա մանկավարժ էր, Երեւանի կոնսերվատորիայի պրոֆեսոր, ամբիոնի վարիչ: Առավել կարեւոր են նրա երաժշտագիտական ուսումնասիրություններն ու հոդվածները: Նա կամավոր սանձնել էր անցյալի մոռացված անուններ վեր հանելու եւ երիտասարդ շնորհալիներին առաջինը նկատելու, խրախուսելու եւ ներկայացնելու դժվարին, բայց շնորհակալ գործը: Մասնագիտության հիրավի նվիրյալ էր Անահիտ Ցիցիկյանը: Երաժշտի եւ հետազոտողի որակները նա հավասարապես էր կրում՝ որպես արտիստ եւ որպես գիտության մարդ, ինչը դրսեւորվում էր ինչպես բեմի զգացական-հուզական հարթություններում, այնպես էլ գիտական մակարդակներում: Հայ երաժշտագիտության մեջ նա նոր ուղղության հիմնադիրը եղավ՝ երաժշտական հնագիտության: Ուսումնասիրող-հետազոտողի տարիների աշխատանքը տվեց իր պտուղները, արդյունքը՝ «Հայկական աղեղնային արվեստը» գիրքն էր, որ տպագրվեց 1977-ին, հայերենով, իսկ 2004-ին՝ ռուսերենով:

12 տարի է անցել, երբ Անահիտ Ցիցիկյանը հրաժեշտ տվեց կյանքին: Այս տարիների ընթացքում նրա անվան հիշողությունները մշտապես վառ են, բնավ չեն խամրում: Անշուշտ, երաժիշտը վաստակել է այդ իրավունքը: Սակայն այն գործունեությունը, որ ծավալում է «Անահիտ» մշակութային հիմնադրամը, արտիստուհու ծննդյան 85-ամյակի առիթով էր: Ծավալուն եւ բազմաբովանդակ երեկո էր սպասվում հանդիսականին աշնանային այդ օրը՝ նոյեմբերի 26-ին, «Մոսկվայի տուն» կենտրոնում: Ինչպես նրան նվիրված յուրաքանչյուր երեկո, այդ օրն էլ ստեղծվեց այդ նույն մթնոլորտը՝ մի տեսակ թավշյա, մեղմ տաք, հարազատ մթնոլորտ: Բացման խոսքով հանդես եկավ Նունե Շամախյանը: Երաշտագետ Արթուր Ավանեսովը ներկայացրեց նրա արվեստը, ստեղծագործական անցած ճանապարհը: Մարտին Վարդազարյանը, Ալիս Հեֆիմբաշյանը, Արմինե Գրիգորյանը պատմեցին

նադրամը արդեն շուրջ տասը տարի, նույնպես նպաստում է դրան: Հիմնադրամը կազմակերպվել եւ ստեղծվել է ջութակահարուհու դստեր՝ Նունե Շամախյանի ջանքերով եւ շնորհակալ աշխատանք է կատարում՝ երաժշտի արխիվային նյութերը համակարգելու եւ հանրությանը ներկայացնելու, ըստ որում դրանք ոչ միայն Անահիտ Ցիցիկյանին անձնապես վերաբերող նյութեր են, այլեւ նրա հետ համագործակցած ժամանակի նշանավոր երաժիշտների: Արխիվային հարուստ այդ նյութի հիման վրա կազմվել եւ հրատարակվել են ժողովածուներ, հոդվածներ, ձայնասկավառակներ:

Հիմնադրամը մի քանի տարի առաջ ստեղծեց եւ հանրությանը ներկայացրեց իր կայքը, որն արտիստուհու կյանքի եւ ստեղծագործական էջերի հարուստ տարեգրություն է՝ լուսանկարներով, տեսանյութերով համալրված:

Վերջին մեծ միջոցառումը, որ նախաձեռնեց «Անահիտ» մշակութային հիմնադրամը, արտիստուհու ծննդյան 85-ամյակի առիթով էր: Ծավալուն եւ բազմաբովանդակ երեկո էր սպասվում հանդիսականին աշնանային այդ օրը՝ նոյեմբերի 26-ին, «Մոսկվայի տուն» կենտրոնում: Ինչպես նրան նվիրված յուրաքանչյուր երեկո, այդ օրն էլ ստեղծվեց այդ նույն մթնոլորտը՝ մի տեսակ թավշյա, մեղմ տաք, հարազատ մթնոլորտ: Բացման խոսքով հանդես եկավ Նունե Շամախյանը: Երաշտագետ Արթուր Ավանեսովը ներկայացրեց նրա արվեստը, ստեղծագործական անցած ճանապարհը: Մարտին Վարդազարյանը, Ալիս Հեֆիմբաշյանը, Արմինե Գրիգորյանը պատմեցին հուշեր, ջութակահարուհու կյանքից դրվագներ, լսվեցին հատվածներ նրա ձայնագրություններից, ցուցադրվեցին արխիվային ժապավեն եւ տեսանյութեր՝ ստեղծելով ջութակահարուհու ներկայության տպավորություն: Երեկոյի անակնկալը Կարինե Խոդիկյանի «Ինչպես են ծնվում լեգենդները» դրամատիկական էսսեն էր՝ գրված արտիստուհու կյանքի դրվագներից մեկի հիման վրա: Հիմնադրամի տնօրենը ներկայացրեց վերջին շրջանի իրենց գործունեությունը. արդյունքում՝ ջութակահարուհու խտասալիկների նոր թողարկում եւ 2 գիրք. «Անահիտ Ցիցիկյան. Կենսամատենագիտական ժողովածու» եւ «Հայկական աղեղնային արվեստը» գրքի հայերեն երկրորդ հրատարակությունը՝ նոր թարգմանությամբ եւ լրամշակված, կից CD-ով:

Գիրքը տպագրվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական բաժանմունքի հովանավորությամբ, «Մուղնի» հրատարակչատանը: Շնորհանդեսային ներկայացումը տեղի կունենա երկուշաբթի՝ դեկտեմբերի 12-ին, «Գրքերի աշխարհ» գրախանութում:

Ներկայացվեցին նաեւ «Անահիտ» մշակութային հիմնադրամի եւ Մշակույթի աջակցության կենտրոնի համատեղ հայտարարված «Ինչ գիտեմ լարային գործիքների հայ կատարողների մասին» թեմայով շարադրությունների հանրապետական մրցույթի արդյունքները, լավագույններին շնորհվեցին մրցանակներ: Երեկոն եզրափակվեց «Փոքրիկ վիրտուոզների» համերգային ծրագրով:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱՅԱՆ

Ավետ Տերտերյանի «Երկրաշարժ» օպերան՝ դեկտեմբերի 12-ին

Երջանկահիշատակ անվանի կոմպոզիտոր Ավետ Տերտերյանի «Երկրաշարժ» օպերան, որը նվիրված է Սպիտակի երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին, կհնչի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի բեմում:

Մ. Մ.

«Միեր Մկրտչյան» թատերախմբի նոր ներկայացումը

Թեֆեյան մշակութային միության Միեր Մկրտչյանի անվան թատերախումբը դեկտեմբերի 10-ին եւ 11-ին Նյու Ջերսիի «Օրադել» տարրական դպրոցի դահլիճում ներկայացնելու է Ալդո Նիկոլսիի «Սպանել սիրո համար» խորագրով իր նոր կատակերգությունը՝ Գագիկ Կարապետյանի բեմադրությամբ:

Հայերեն լեզվով ներկայացվող այս պիեսը երրորդն է լինելու Կարապետյանի բեմադրական կարիերայում:

Հ. Ծ.

«Վիվասել-ՄՏՍ»-ն արժանացել է «Սպասարկման լավագույն որակ» մրցանակին

«Վիվասել-ՄՏՍ» ընկերությունը Սպառողների ազգային ասոցիացիայի կողմից պարգեւատրվել է «Սպասարկման լավագույն մշակույթ» մրցանակով: Ընկերությունը ասոցիացիայից ստացել է նաեւ հատուկ պատվոգիր՝ «Կապի եւ հեռահաղորդակցության ոլորտում ձեռք բերած հաջողությունների, մշտապես որակյալ սպասարկում կազմակերպելու եւ սպառողների վստահությունն անվերապահորեն վայելելու, սպառողական շուկայում կայուն տեղ զբաղեցնելու համար»:

Մրցանակաբաշխությունը կայացել է Հայաստանում սպառողական շարժման 20-ամյա հոբելյանին նվիրված հանդի-

սավոր արարողության շրջանակներում:

Պարգեւատրված ընկերությունները որոշվել են անկախ փորձագետների խմբի եւ Հայաստանի սպառողների ազգային ակադեմիայի պատվավոր անդամների կողմից՝ մարկետինգային եւ մոնիտորինգային երկարաժամկետ ուսումնասիրությունների հիման վրա:

Վեց տարիների ընթացքում, իր բաժանորդներին հնարավորինս մոտ լինելու համար, «Վիվասել-ՄՏՍ»-ին հաջողվել է գործարկել սպասարկման կենտրոնների ընդգրկուն ցանց ամբողջ հանրապետության տարածքում: Ընկերության ցանցային ծածկույթը հնարավորություն է ընձեռում սպասարկել ավելի քան 2,5 միլիոն բաժանորդի: Հիմնադրման առաջին օրվանից «Վիվասել-ՄՏՍ»-ն առաջնորդվել է հիմնարար արժեքներով, որոնց մեջ կարեւոր տեղ է զբաղեցնում իր բաժանորդներին բարձրորակ ծառայություններ մատուցելը:

Ինտելեկտուալ խաղերում Հայաստանը ներկայացնում է Էլինա Դանիելյանը

Պեկինում ինտելեկտուալ խաղերի շրջանակում մեկնարկել են շախմատի կանանց եւ տղամարդկանց մրցաշարեր, որոնց մասնակցում են 16-ական շախմատիստներ ու շախմատիստուհիներ: Վերջիններիս թվում է Հայաստանի միակ ներկայացուցիչ Էլինա Դանիելյանը, որը շուտով գլխավորելու է Հայաստանի կանանց հավաքականը Թուրքիայում անցկացվելիք շախմատի աշխարհի թիմային առաջնությունում:

Մրցաշարի մասնակիցները նախ մրցում են արագ շախմատում՝ անցկացնելով 7 տուր շվեյցարական մրցակարգով: Դեկտեմբերի 12-13-ին կանցկացվի կայծակնային մրցաշար շրջանաձեւ մրցակարգով: Դեկտեմբերի 14-16-ը մրցաշարի մասնակիցներն ուժերը կչափեն «կույր» շախմատում: Շվեյցարական մրցակարգով կանցկացվի 7 տուր:

Երեկ արագ շախմատի մրցաշարում մասնակիցներն անցկացրին 2 տուր: Երկու մրցախաղերում էլ Էլինա Դանիելյանը հաշտություն կնքեց մրցակցուհիների հետ: Առաջին պարտիայում նրա մրցակցուհին Աննա Մուզիչուկն էր, իսկ հաջորդ մրցախաղում Էլինան մրցեց Ելենա Դեմբոյի հետ: Էլինան վաստակել է 1 միավոր:

Կանանց մրցաշարի միանձնյա առաջատարի դերը ստանձնել է աշխարհի նախկին չեմպիոնուհի, ռուսաստանցի Ալեքսանդրա Կոստենյուկը: Նա 2 հաղթանակ է տոնել Աննա Զատոնսկիխի եւ Նանա Ջագնիձեի նկատմամբ: Աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը, Ցզյու Վենցզյունը, Պիա Կրամլինգն ու Էլիզաբեթ Պյոնցը վաստակել են 1,5-ական միավոր:

Տղամարդկանց մրցաշարը եւս բավական ուժեղ կազմ ունի: Այստեղ հաջող են մեկնարկել չինացի Վան Հաոն եւ ադրբեջանցի Շահրիյար Մամեդյարովը, որոնք 2-ական հաղթանակ են տոնել: Վան Հաոն հաղթել է Զոլթան Ալմաշիին եւ Ռուսլան Պոնոմարյովին, Մամեդյարովը պարտության է մատնել Ֆրանցիսկո Վալլեխոյին եւ Սերգեյ Կարյակինին: 1,5-ական միավոր ունեն Վասիլի Իվանչուկը, Ալեքսանդր Գրիշչուկը եւ Մախիմ Վաշիե-Լագրավը:

Քարելավեցին ցուցանիշները

Կորեայի Ջեջու քաղաքում անցկացված ձյուդոյի աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլին Հայաստանից մասնակցեցին Գայանե Հարությունյանը (48 կգ) եւ Ժաննա Սանկեւիչը (57 կգ): Երկուսն էլ վաս հանդես չեկան եւ ավելացրին իրենց վարկանիշային միավորների քանակը:

Գայանեն 1/8 եզրափակիչում առավելության հասավ մոնղոլ Գանբատարի նկատմամբ, իսկ հաջորդ փուլում զիջեց Իսրայելի ներկայացուցիչ Ռոնի Շավարցին: Վերջինս հասավ մինչեւ եզրափակիչ, ուստի հայ ձյուդոյիստուհին հնարավորություն ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար: Սակայն նա անհաջող հանդես եկավ՝ պարտվելով չինացի Շիի Քսեին ու գրավելով 7-րդ տեղը: Գայանե Հարությունյանը այդ արդյունքի համար 16 միավոր վաստակեց:

Ժաննա Սանկեւիչը 1/16 եզրափակիչում հաղթեց կորեացի Զի Եուին Սունգին, սակայն հաջորդ գոտեմարտում պարտվեց քաջային այդ կարգում չեմպիոն հռչակված ձյուդոյիստուհուն: Սանկեւիչը 12 միավոր վաստակեց:

Այժմ ձյուդոյիստուհիների դասակարգման ցուցակում Գայանե Հարությունյանը մինչեւ 48 կգ քաջային կարգում 150 միավորով զբաղեցնում է 44-րդ տեղը, իսկ Ժաննա Սանկեւիչը (57 կգ) 120 միավորով 48-րդ տեղում է: Նշենք, որ Լոնդոնի օլիմպիադային մասնակցելու իրավունք են ստանում քաջային յուրաքանչյուր կարգում 14 ուժեղագույնները:

Հայ ծանրորդները չեն մասնակցի ՌԴ նախագահի գավաթի խաղարկությանը

Դեկտեմբերի 16-18-ը Բելգորոդում կայանալու է ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի գավաթի ծանրամարտի միջազգային առաջին մրցաշարը: Այն նաեւ Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերի համար վարկանիշային է: Մրցաշարին մասնակցելու են տղամարդկանց 94, 105 եւ 105 կգ-ից բարձր, կանանց 75 եւ 75 կգ-ից բարձր քաջային կարգերի 35 ծանրորդներ:

Հայաստանից այդ մրցաշարին մասնակցելու հրավեր էին ստացել գերծանրքաջայիններ Ռուբեն Ալեքսանյանն ու Հռիփսիմե Խուրշուդյանը: Սակայն Հայաստանի հավաքականի մարզչական խորհուրդը նպատակահարմար չի գտել նրանց մասնակցությունն այդ մրցաշարին, քանի որ Փարիզում կայացած աշխարհի առաջնության ժամանակ նրանք վնասվածքներ էին ստացել:

Հորտն աղաղակեց վետերանների հաղթանակը

Մեկօրյա հանգստից հետո Չեխիայի շախմատի մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջ՝ անցկացնելով 5-րդ տուրի հանդիպումները: Վետերանները մրցախաղը շահեցին 2,5-1,5 հաշվով: Թիմի հաղթանակն աղաղակեց Վլատիմիլ Հորտը, որն առավելության հասավ Եվա Կուլովանայի նկատմամբ: Մյուս պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Մուզիչուկն ու Վահանյանը, Պոգոնինան ու Հյուբները, Սաչդեւան ու Գուլկոն:

Քարեգործական հերթական միջոցառումը

Դեկտեմբերի 13-ին ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանն ու ՀՀ հավաքականի եւ Դոնեցկի «Շախտյորի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը բարեգործական առաքելությամբ կայցելեն Արցախ: Նույնպիսի նպատակ է հետապնդում նաեւ դեկտեմբերի 16-ին նախատեսված նրանց այցը Գավառ, որտեղ Հենրիխի եւ ՀՖՖ-ի կողմից մանկատանը գույք կնվիրաբերվի:

Դրոգբան Բեքհեմի հնարավոր փոխարինող

ԱՄՆ-ի ֆուտբոլի առաջնության չեմպիոն «Լոս Անջելես Գելեքսին» պատրաստ է տարեկան 5 մլն ֆունտ ստեռլինգ առաջարկել «Չելսիի» հարձակվող Դիդյե Դրոգբային: Կոտդիվուարցի 33-ամյա ֆուտբոլիստը դիտարկվում է որպես Դեւիդ Բեքհեմի հնարավոր փոխարինող: Վերջինս դեռեւս չի որոշել, թե հաջորդ մրցաշրջանում որ թիմում է շարունակելու ելույթները:

ԼՈՆԴՈՆ

Խաղաղ տուր

Լոնդոնում ընթացող շախմատի մրցաշարի 6-րդ տուրի բոլոր 4 պարտիաներում էլ ոչ-ոքի արդյունք գրանցվեց: Լեւոն Արոնյանն անգլիացի Մայքլ Ադամսի հետ սեւերով հաշտություն կնքեց 34-րդ քայլին: Ամենաերկարը Վիշվանաթան Անանդի եւ Վլադիմիր Կրամնիկի պարտիան էր, որում մրցակիցները հաշտության ձեռք մեկնեցին 39-րդ քայլին: Իսկ առավել կարճ տեւեց Լյուկ Մակշեյնի եւ Հիկարու Նակամուրայի մրցավեճը, որն ավարտվեց 31-րդ քայլին: 5 քայլ ավելի կատարեցին Դեւիդ Հաուելն ու Նայջել Շորթը:

6 տուրից հետո 11 միավորով միանձնյա առաջատարը Նակամուրան է: 9-ական միավոր ունեն Կրամնիկը, Մակշեյնը եւ Կառլսենը, որը 6-րդ տուրում ազատ էր խաղից: Արոնյանը 6 միավորով Անանդի հետ բաժանում է 5-6-րդ տեղերը:

Այսօր կայանալիք 7-րդ տուրում Արոնյանը սպիտակներով կխաղա Անանդի հետ: Կկայանան նաեւ Շորթ-Մակշեյն, Կրամնիկ-Հաուել, Կառլսեն-Ադամս պարտիաները: Մրցաշարի առաջատար Նակամուրան 7-րդ տուրում հանգստանալու է, այնպես որ նրա մոտակա հետապնդողները կարող են շրջանցել ճապոնացի շախմատիստին:

Մխիթարյանը կվիճարկի Բրազիլիայի չեմպիոնի տիտղոսը

Այսօր Բրազիլիայում մեկնարկում է երկրի շախմատի 78-րդ առաջնությունը: 12 մասնակիցների թվում է հայազգի գրոսմայստեր Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը: Նա իր անհատական վարկանիշով (2487) 6-րդն է մասնակիցների մեջ Էվերալդո Մացուրայի հետ: Ամենաբարձր վարկանիշն ունի գրոսմայստեր Ձիովանի Վեսկովին (2637), որին հաջորդում են Ռաֆայել Լեյտաոն, Էնրիկե Մեկինգը (2590), Ալեքսանդր Ֆիեռը (2573) եւ Դիեգո դի Բեռարդինոն (2491): Մրցաշարը կանցկացվի շրջանաձեւ մրցակարգով: Չեմպիոնը հայտնի կդառնա դեկտեմբերի 20-ին:

Տեւեսի հետ համաձայնությունը կայացել է

Իտալական «Միլանը» համաձայնության է եկել «Մանչեսթր Սիթիի» արգենտինացի հարձակվող Կառլոս Տեւեսի հետ վերջինիս տեղափոխության հարցում: «Միլանը» ցանկանում է ֆուտբոլիստին վարձավճարով վերցնել, իսկ մրցաշրջանի ավարտին գնել նրա տրանսֆերը: Առաջիկա կես տարում «Միլանը» պատրաստ է արգենտինացուն 3 մլն եվրո վճարել, իսկ 3-ամյա պայմանագիր կնքելուց հետո նրան տարեկան 5 մլն եվրո աշխատավարձ տալ: Ինչ վերաբերում է «Մանչեսթր Սիթիին», ապա «Միլանը» պատրաստ է ամռանն ակումբին 15-20 մլն եվրո վճարել:

Հիշեցնենք, որ Կառլոս Տեւեսն արդեն բավական ժամանակ չի խաղում անգլիական ակումբում այն բանից հետո, երբ սեպտեմբերին «Բավարիայի» հետ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի խաղում հրաժարվել էր փոխարինման դուրս գալ: Դրանից հետո թիմի գլխավոր մարզիչ Ռոբերտո Մանչինին հայտարարել էր, որ Տեւեսն այլեւս թիմում հանդես չի գա, իսկ ակումբը ֆուտբոլիստին 1,5 մլն ֆունտ ստեռլինգով տուգանել էր:

Այդ կոնֆլիկտից հետո Տեւեսով սկսել էին հետաքրքրվել ՊՍԺ-ն, «Յուվենտուսը», «Ալ Վասլը», որը ներկայումս մարզում է Դիեգո Մարադոնան:

Ըստ «Միլանի» փոխնախագահ Ադրիանո Գալիանիի, «Մանչեսթր Սիթին» պետք է ընդունի իտալական ակումբի առաջարկը, քանի որ Տեւեսի չխաղալով վնասներ է կրում:

Տոնական ցածր գներ՝ BlackBerry® Bold™ 9700 եւ BlackBerry® Storm2™ 9520 սմարթֆոնների համար «Վիվասել-ՄՏՍ»-ից

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, ս.թ. դեկտեմբերի 8-ից մինչեւ հաջորդ տարվա հունվարի 13-ը ընկերության սպասարկման կենտրոններում BlackBerry... BoldTM 9700 եւ BlackBerry® Storm2™ 9520 սմարթֆոնները կարելի է բերել տոնական ցածր գներով:

	Նախկին գին (դրամ)	Նոր գին (դրամ)
BlackBerry® Bold™ 9700	235000	202000
BlackBerry® Storm2™ 9520	257000	195000

Աղառիկ գնելու դեպքում կգործեն հետեւյալ պայմանները.

	Ամսական վճար		
	12 ամիս	18 ամիս	24 ամիս
BlackBerry® Bold™ 9700	18519	12889	10085
BlackBerry® Storm2™ 9520	17878	12442	9735

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել «Վիվասել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

ԱԶԳ

Օրվա հեռաֆրով

Հաստատվեց մայրաքաղաքի զարգացման 2012 թ. ծրագիրը

Քաղաքապետարանում արտահերթ նիստի ժամանակ հավանության են արժանացել Երեւան քաղաքի սեփականություն համարվող մի շարք բնակարաններ քաղաքացիներին անհատույց օտարելու որոշման նախագծերը: Ավտոտրանսպորտի պահպանության, սպասարկման, նորոգման եւ շահագործման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու, բնակչության երթեւեկն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ ավագանին հաստատել է «Երեւանի ավտոբուս» ՓԲ ընկերություն ստեղծելու որոշման նախագիծը:

Դա պայմանավորված է վերջին տարիներին մայրաքաղաքում ավտոտրանսպորտի ավելացման հանգամանքով: Երեւանը տրանսպորտից բեռնաթափելու, հասարակական տրանսպորտի սպասարկման մակարդակը բարձրացնելու նպատակով քաղաքապետարանը որդեգրել է քաղաքային ավտոբուսները երթուղային ցանցում ավելացնելու եւ զուգահեռաբար միկրոավտոբուսների թիվը նվազեցնելու քաղաքականություն: Համաձայն Չինաստանի հետ կնքված պայմանագրի՝ Երեւան կներկրվի 249 ավտոբուս, որի առաջին խմբաքանակը՝ 66 ավտոբուս, Երեւանում կլինի առաջիկա օրերին:

Ավագանին կողմ է քվեարկել մայրաքաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարների գալիք տարվա դրույքաչափերի սահմանմանը: Աղբահանության վերաբերյալ **Տարոն Մարգարյանը** նշել է, որ որոշման ընդունումը կնպաստի վարձավճարների գանձման գործընթացի կանոնակարգմանը: Ըստ քաղաքապետի, որոշման ընդունմամբ բնակչության համար ֆինանսական որեւէ լրացուցիչ բեռ չի առաջանում: Մայրաքաղաքում 2012-ին աղբահանությունը կազմակերպելու համար ավագանին սահմանել է աղբահանության վճարի դրույքաչափեր՝ կենցաղային աղբի համար յուրաքանչյուր բնակչից գանձել 200 դրամ, ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝ մեկ խորանարդ մետր աղբի համար կգանձվի 2500 դրամ, իսկ շինարարական եւ խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման եւ փոխադրման թույլտվության համար կսահմանվի 500 դրամ: Հ. Հ.

Հանուն «Հրազդան» մարզադաշտի Ռուբեն Հայրապետյանը պատրաստ է ...

1-ին էջից

Աշոտ Աղաբաբյանը վերջերս հայտարարել էր, որ մարզադաշտում հնարավոր է անցկացնել միջազգային մակարդակի հանդիպումներ, եւ հիշեցրել էր Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը: Այս կապակցությամբ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահը նշեց, որ Հայաստան-Թուրքիա խաղի ժամանակ տրիբունաներում 56.000 հանդիսական չկար: Նա մտավախություն ունի՝ 56.000 հանդիսականի անվտանգությունն անհնար է ապահովել: Ըստ Հայրապետյանի՝ գալիք ընտրական փուլի մեկնարկում Մալթային եւ Բուլղարիային հյուրընկալվելիս եւ 6 միավոր վաստակելուց հետո անհնար կլինի զսպել հայ ֆուտբոլիստներին: Իսկ հաջորդ խաղը լինելու է Երեւանում, եւ Հայաստանի հավաքականը խաղալու է Իտալիայի հավաքականի հետ: Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահը հույս հայտնեց, որ առեւտրի կենտրոն մարզադաշտի հարեւանությամբ չի կառուցվի: Դրա համար նա ամեն ինչ կանի. պատրաստ է անգամ էքսկավատորի տակ պառկել:

«Հրազդան» մարզադաշտի տարհանման գոտում առեւտրի կենտրոն կառուցելու վերաբերյալ երեկ տեղի է ունեցել հանդիպում քաղաքապետարանում: «Առաջին ճակատ» երկրպագուների շարժման ներկայացուցիչները քաղաքապետ Տարոն Մարգարյանին են ներկայացրել իրենց մտահոգությունները: Նրանք շեշտել են, որ կառուցապատման դեպքում մարզադաշտը կկորցնի իր գործառնական նշանակությունը, ինչը բացասաբար կդրդդառնա հայկական ֆուտբոլի զարգացման համար: Մարգարյանը նշել է, որ խնդիրն առարկայական հիմնավորում չունի, քանզի վերոնշյալ տարածքում շինություն կառուցելու նախագիծ ներկայացված չէ: Քաղաքապետը հավաստիացրել է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող քաղաքաշինական հարցերի վերաբերյալ հաշվի կառնվի նաեւ հասարակական կարծիքը:

15 մլն դոլար «Արդշինինվեստբանկին» Ասիական զարգացման բանկից

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», բանկը ներգրավել է հերթական նպատակային վարկը, որի միջոցներն ուղղվելու են փոքր եւ միջին բիզնեսի վարկավորմանը: Այդ մասին երեկ «Արդշինինվեստբանկի» եւ Ասիական զարգացման բանկի միջեւ ստորագրվել է 15 մլն դոլարի վարկային պայմանագիր:

Այս վարկային պայմանագրի շրջանակներում հատուկ ուշադրության են արժանանալու կանանց կողմից ստեղծված եւ ղեկավարվող ձեռնարկությունների ծրագրերը, որոնց ֆինանսավորումը հնարավորություն կտա նվազեցնելու գենդերային խտրականությունը եւ ստեղծելու հավասար մրցակցային պայմաններ տնտեսվարող կանանց համար:

Վարչության նախագահ Միհեր Գրիգորյանը այս առթիվ տեղեկացրեց, որ «Արդշինինվեստբանկը» կարեւորում է Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության ընդլայնումը: Բանկի ռազմավարական առաջնահերթություն է նաեւ համագործակցության զարգացումը փոքր եւ միջին բիզնեսի հետ: «Այս եւ մյուս ներգրավված ֆինանսական միջոցները հնարավորություն կտան այդ նպատակային խմբին առաջարկելու վարկավորման առավել գրավիչ պայմաններ», եզրափակեց Միհեր Գրիգորյանը:

Ա. Մ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

Հ/Հ	Գույքի հասցեն (գտնվելու վայրը)	Նպատակը	Հողամասի մակերեսը /քմ/	Շինության մակերեսը /քմ/	Մեկնարկային գինը /դրամ/
1	Մաշտոցի պողոտա 5գ բնք, 30 տարածք	ոչ բնակելի տարածք		102.3	5,700,000
2	Բաբինջաղյան փող.հ.185/1	կաթսայատուն	321.07	270.4	14,000,000
3	Միկոյան փող., 15/2	կաթսայատուն	311.24	282.00	15,400,000
4	Գալշոյան 19/1	կաթսայատուն	159.96	137.40	12,700,000
5	Աթոյան անց., հ11/2	կաթսայատուն	436	436	25,800,000
6	Խաղաղ Դոնի 12/8	կաթսայատուն	164	164	11,000,000
7	Ճառագայթային փող., 136/1	կաթսայատուն	316	283	22,700,000
8	Իսակովի պող., 52/27	կաթսայատուն	159	159	8,800,000
9	Շահվերդյան 18, ԿՁՀ 31	կաթսայատուն	254	237	26,600,000
10	Շիրակի 56	կաթսայատուն	255	229	8,100,000
11	Ավետիսյան փող., 51/1	կաթսայատուն	285	321	15,600,000
12	Նոր-Նորք 8-րդ մ/շ 17/4	կաթսայատուն	241	210	10,200,000
13	Վիլնյուսի փող., 113/4	կաթսայատուն	241	212	8,400,000
14	Վիլնյուսի փող.,67/2	կաթսայատուն	243	213	8,400,000
15	Կաթսայատուն, Արծրունու փող. 16/2	կաթսայատուն	138.0	115.7	8,600,000

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ դեկտեմբերի 26-ին ժ.16.00-ին , հ. Երեւան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ դեկտեմբերի 26-ը, ժամը 14.00-ն:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Orange-ում նոր հեռախոսային ծառայություն սմարթֆոններ օգտագործողների համար

Այսուհետեւ սմարթֆոնների օգտագործողները կարող են իրենց սմարթֆոնի հետ կապված տեխնիկական աջակցություն ստանալ ոչ միայն Orange- խանութների Orange Care անկյուններում, այլեւ նոր հեռախոսային ծառայության միջոցով: Հայաստանում առաջին անգամ առաջարկվող այս ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է պարզապես Orange հեռախոսահամարից հավաքել 500: Վերապատրաստված տեխնիկական անձնակազմը պատրաստ է օգնել զանգահարողներին կատարել ցանցի տվյալների, էլ. փոստի, ստեղնաշարի, լեզվի, ժամի եւ օրվա կարգավորումները սմարթֆոնում, ինչպես նաեւ ցուցաբերել այլ տեխնիկական աջակցություն: Ծառայությունը վճարովի է. մեկ րոպեի արժեքն է 150 դրամ, իսկ գանձումը կատարվում է ըստ վայրկյանների:

«Սմարթֆոնների արագ տարածմանը զուգընթաց՝ Orange-ը ցանկանում է դառնալ իր բաժանորդների ուղեկիցը թվային աշխարհում: Ընկերությունը հասկանում է այն դերը, որ կարող է ունենալ իր բաժանորդների ամենօրյա կյանքում՝ նաեւ օգնելով եւ հնարավորություն տալով օգտագործել «խելացի» սարքերի բոլոր հնարավորությունները», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյուքուան:

Orange-ը երկարացնում է ինտերնետի տնական առաջարկի ժամկետը մինչեւ դեկտեմբերի 31-ը

Ամսական 25 ԳԲ գերարագ ինտերնետ

Բաժանորդագրվելով Ինտերնետ Հիմայի հատուկ սակագնային ոլանին 12 ամսով (10,000 դրամ ամսավճարով)՝ ինտերնետի սիրահարներն առաջին 12 ամիսների ընթացքում կստանան ամսական 25ԳԲ գերարագ ինտերնետ, 40 հաղորդագրություն բոլոր ուղղություններով, ինչպես նաեւ նոր Ինտերնետ Հիմա 14.4 մոդեմն ընդամենը 1 դրամով: Գերարագ ինտերնետը սպառելուց հետո բաժանորդները կարունակեն օգտվել անսահմանափակ ինտերնետից 512 Կբ/վ ներբեռնման եւ 256Կբ/վ վերբեռնման արագությամբ:

Առաջին տարվա ավարտից հետո բաժանորդները կսկսեն ստանալ ամսական 12 ԳԲ գերարագ ինտերնետի փաթեթ եւ կարունակեն ստանալ բոլոր ուղղություններով ամսական 40 հաղորդագրություն ուղարկելու հնարավորություն:

Լրատուական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 9.12.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: